Շվեդիա
Sverige

ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ինքրա
հոգեբանական ակումբ

ԶԵԿՈՒՅՑ

«Կանխարգելենք բռնությունը դպրոցներում՝ ի նպաստ առողջ հասարակության» ծրագիր

ՉԵԿՈՒՅՑ

Բուլինգը՝ բռնության համատեքստում

Հայաստան, Գյումրի 2022

Այս հետազոտությունն իրականացվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության, Միդայի աջակցությամբ իրականացվող «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում: Նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն ստեղծողը: Հետազոտությունում արտահայտված տեսակետները/ բովանդակությունը կարող է չհամընկել ԵՀՀ-ի և/կամ Միդայի տեսակետների հետ:

Ուսումնասիրությունը կատարվել է Գյումրիում:
Ընդգրկվել է Գյումրու և Շիրակի մարզի տարբեր համայնքների 20-ից ավելի պետական հանրակրթական դպրոց:

Հետազոտող՝ Անի Մկրտչյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

Իրավիճակի նկարագրություն 7

Իրավիճակը Հայաստանում 9

Իրավակարգավորումներ. իրավական ակտեր 11

Կարծիք են հայտնում դպրոցների տնօրեններն ու դասարանների դասղեկները 15

Կարծիք են հայտնում ծնողները 22

Բռնությունն ու բուլինգը՝ դպրոցականի աչքերով 25

Բռնությունների դեպքերի վերաբերյալ ՀՀ ՄԻՊ-ի և ՀՀ ոստիկանության վիճակագրությունը 34

Շիրակի մարզպետարանի և ԿԳՄՍ նախարարության տեղեկությունը 35

Եզրակացություն. բացահայտված խնդիրներ 36

Առաջարկություններ 39

Վերջաբան 41

Գրականության ցանկ 42

Հարցաթերթիկների ձևանմուշ 43

Հավելված 1 43

Հավելված 2 44

Հավելված 3 48

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ինթրա» հոգեբանական ակումբ հասարակական կազմակերպությունը 2021 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում Գյումրու և Շիրակի մարզի տարբեր համայնքների 20-ից ավելի պետական հանրակրթական դպրոցների աշակերտների, ուսուցիչների, ծնողների շրջանում փորձել է բացահայտել բռնության (այդ թվում՝ բուլինգը բռնության համատեքստում) դեպքերի պատճառները, հետևանքները, դրսևորման տեսակները: Բռնության (այդ թվում՝ բուլինգի) դրսևորման առանձնահատկությունները դիտարկվել են ոչ միայն աշակերտ-աշակերտ, այլև ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում:

Հետազոտությունն ընդգրկել է 1000 աշակերտի, 50 ծնողի հետ հարցումների, 20 տնօրենի ու 20 դասղեկի, 3 մասնագետի հետ խորքային հարցազրույցների արդյունքները, իրավական ակտերի վերլուծությունն ու համեմատական վերլուծությունը:

Համեմատական վերլուծություն կատարելու նպատակով ընտրվել են ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային համայնքների պետական հանրակրթական դպրոցները:

Ծրագրի շրջանակում պատրաստվել է հետազոտության ամփոփիչ զեկույց «Բուլինգը՝ բռնության համատեքստում» թեմայով: Զեկույցում ամփոփվել են աշակերտների, ծնողների հետ հարցումների, ուսուցչական անձնակազմի, տնօրենների, մասնագետների հետ անցկացրած հարցազրույցների արդյունքները, բացահայտված խնդիրներն ու այդ խնդիրների լուծման ուղիները, առաջարկությունները:

Հետազոտության նպատակն է՝ պետական հանրակրթական դպրոցներում բացահայտել բռնության (այդ թվում՝ բուլինգի) դեպքերը, տեսակները, դրանց պատճառահետևանքային կապը և կանխարգելման ուղիներ մատնանշել:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ թե աշակերտները, թե ծնողներն ու դպրոցները հետաքրքրված են բուլինգի թեմայով, որը ՀՀ-ում քիչ ուսումնասիրված է և ներկայում չունի իրավական կարգավորումներ: Բուլինգի ենթարկված երեխան բռնության հետևանքը կրում է իր ամբողջ կյանքում, աստիճանաբար փոխվում է նրա շփման շրջանակը, փոխհարաբերությունները մարդկանց և շրջապատի հետ: *«Բռնությունը կարող է իր հետ բերել մանկական տրավմաներ, խորքային տրավմաներ, որոնք հետագայում կարող են արտահայտվել տարբեր դեպքերով, տարբեր դիմագծերով: Եթե աշխատանք չտարվի, ապա բռնության ենթարկվածը կդառնա կամ բռնարար, կամ վախկոտ, զգուշավոր մարդ: Թեմայի առումով պահանջարկ կար: Սակայն երբ ավարտում էինք դասընթացներն ու դուրս գալիս դպրոցներից, այդ կապը, կարծես, կտրվում էր: Դրա համար դպրոցներում անհրաժեշտ են շարունակական աշխատանքներ, իրազեկող հանդիպումներ բռնությունների կանխարգելման վերաբերյալ: Շատ ուսուցիչներ ուզում են, որ մենք իրենց հետ աշխատենք: Բայց երբ ասում ենք, որ դուք պիտի մեզ դիմեք, իրենց ինչ-որ բան խանգարում է: Կարծում եմ, որ իրենց ձևական թղթաբանությունն է խանգարում, դպրոցներն այնքան են զբաղված այդ ձևական թղթաբանությամբ, որ ժամանակ չեն ունենում մեզ դիմելու»,*-ասում է ծրագրի հոգեբան Օլգա Ջավադյանը:

Ցավոք, հարցումները, այցելությունները ցույց են տվել, որ Շիրակի մարզի պետական հանրակրթական դպրոցներում առկա են բռնության դեպքեր՝ մասնավորապես հոգեբանական, և այդ բռնության մասնակիցները միայն աշակերտները չեն:

Միաժամանակ, աշակերտները լավատեղյակ չեն իրենց իրավունքներից ու պարտականություններից:

INTRODUCTION

During November-December 2021, “Intra” Psychological Club NGO tried to find out the causes, results and consequences of violence (including bullying in the context of violence) among students, teachers and parents of more than 20 state primary schools in different communities of Gyumri and Shirak region. The peculiarities of violence (including bullying) were observed not only in the student-student relationship but also in the teacher-student relationship.

The research included the results of in-depth interviews with 1000 students, 50 parents, 20 principals and 20 classheads, 3 specialists, analysis of legal acts and comparative analysis.

Both rural and urban public schools were selected for making comparative analysis.

Within the framework of the project, a final report of the research on ‘Bullying in the context of violence’ was prepared. The given report summarizes the results of interviews with students, parents, teaching staff, principals, professionals, identified problems and ways to solve those problems and suggestions.

The aim of the research is to identify the cases, types of violence (including bullying) in state primary schools, their causal link and indicating ways to prevent.

The results of the research showed that both students, parents and schools are interested in the topic of bullying, which is not enough studied in Armenia and currently has no legal regulations. A child who has been bullied suffers violence throughout his life, gradually changing the scope of his contact, relationships with people and the environment. ‘Violence can cause to child traumas, deep traumas, which can later be expressed in different cases, with different features. If work is not done, the victim will become either a cruel or a coward and careful person. There was a demand in terms of the topic. But when the courses were over and we left schools, that connection seemed to be lost. For that reason, continuous work of awareness, meetings on violence prevention at schools must be organized. Many teachers want us to work with them. But when we say that you should apply to us, something prevents them. I think that their paperwork hinders them, the schools are so busy with that paperwork that they do not have time to apply to us’, says Olga Javadyan, a program psychologist.

Unfortunately, the interviews and visits show that there are cases of violence in the state primary schools of Shirak region, particularly psychological, and the participants of that violence are not only the students.

At the same time, students are not well aware of their rights and responsibilities.

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության մեթոդաբանական գործիքներն են եղել՝

1. Իրավական ակտերի ուսումնասիրություն, վերլուծություն եւ համեմատական վերլուծություն է կատարվել:

2. Գյումրու և Շիրակի մարզի (այդ թվում՝ գյուղական համայնքների) դպրոցների 20 տնօրենների և 20 դասղեկների հետ անցկացվել են խորքային հարցազրույցներ (դպրոցներում բռնությունների դրսևորման, պատճառների, կանխարգելման և այլ հարցերի շուրջ)։

3. Գյումրու և Շիրակի մարզի (այդ թվում՝ գյուղական համայնքների) դպրոցների 10-18 տարեկան 1000 աշակերտ մասնակցել է անանուն հարցման (դպրոցներում բռնությունների դրսևորման, պատճառների, կանխարգելման և այլ հարցերի շուրջ)։

4. Գյումրու և Շիրակի մարզի (այդ թվում՝ գյուղական համայնքների) դպրոցների 50 ծնող մասնակցել է անանուն (առցանց) հարցման (դպրոցներում բռնությունների դրսևորման, պատճառների, կանխարգելման և այլ հարցերի շուրջ)։

5. Դպրոցներում բռնությունների կանխարգելման դասընթացն անցկացրած («Ինթրա» հոգեբանական ակումբ ՀԿ-ի մասնագետների, փորձագետների հետ) խորքային հարցազրույցներ են կատարվել:

Հետազոտության իրականացման ժամանակահատվածը՝ 2021 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներ:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դպրոցը կարևոր միջավայր է յուրաքանչյուր աշակերտի համար: Նույնքան կարևոր է, թե դպրոցում, դասարանում ինչպիսի մթնոլորտ է տիրում: Եթե դպրոցում կա ծեծկռտուք, բռնության ցանկացած դրսևորում, ապա այն բացասական է անդրադառնում բոլոր երեխաների՝ թե՛բռնության ենթարկվողի, թե՛ բռնություն գործադրողի վրա:

Յուրաքանչյուր երեխա անվտանգ, ապահով, իր արժանապատվությունը հարգող դպրոցական միջավայրի իրավունք ունի:

«Բռնություն կա, եթե կա դիտավորություն, կրկնություն և ուժի գործադրում: Բռնարարը նա է, ով մտադրված և գիտակցաբար է ցավ պատճառում շրջապատի մարդկանց: Որոշիչ գործոն է բռնության կրկնվող բնույթ ունենալը: Բռնությունը վարքագիծ է, այլ ոչ թե առանձին մի դեպք: Բռնարար վարք ցուցաբերող երեխաները սովորաբար ավելի բարձր սոցիալական կարգավիճակի ներկայացուցիչ են կամ ուժային դիրք ունեն»[1]*:*

Չնայած երեխայի նկատմամբ բռնության արգելքի, այնուամենայնիվ< երեխաների նկատմամբ բռնության խնդիրը համակարգային լուծում դեռևս չի ստացել:

Երեխայի հանդեպ բռնություն տեղի է ունենում և ընտանիքում, և կրթական, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, քրեակատարողական հիմնարկներում, փողոցում:

Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգում (ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման հավելված) անդրադարձ է կատարվել միջազգային տարբեր հետազոտությունների[2] արդյունքների, որոնք հաստատում են, որ աշխարհի յուրաքանչյուր 4-րդ ընտանիքում առկա է բռնություն, որը կարող է ծագել տարաբնույթ պատճառներով սթրեսային իրավիճակ ընտանիքում, ոչ բավարար եկամուտներ, բնակարանային վատ պայմաններ, աշխատանքի բացակայություն, սերունդների արժեքային համակարգերի բախումներ, ալկոհոլի չարաշահում և թմրանյութերի օգտագործում, երեխային ոչ բավարար ուշադրության և ժամանակի տրամադրում:

Երեխաների նկատմամբ կիրառվող բռնության մի քանի տեսակ կա՝ ֆիզիկական, հոգեբանական, սեռական և անտեսման բռնություն: Թեպետև որոշ փորձագետներ, հոգեբաններ անտեսումը չեն համարում բռնություն: Անտեսումը կարող է դրսևորվել երեխայի հանդեպ խնամքի, հոգատարության պակասով և նրա նկատմամբ անուշադրությամբ:

Այսօր շատ է խոսվում նաև դպրոցներում դեռահասների միջև դրսևորվող բուլինգի և կիբեր-բուլինգի մասին:

Բուլինգը (անգլ. bully՝ կռվարար, բռնարար) անձի նկատմամբ կիրառվող ագրեսիվ վարքն է՝ հետապնդում, հոգեբանական տեռոր, ծեծ, հեգնանք, ծաղրանք, բամբասանքների տարածում: Այն կարող է տեղի ունենալ ցանկացած վայրում, բայց առավել վտանգավոր է դպրոցականների շրջանում:

Բուլինգն իրականացնում են անձինք, ովքեր գերակա դիրք ունեն իրենց շրջապատում:

---

[1] https://clck.ru/dXvF5 Բռնություն: Սկսենք կանխարգելելուց, ՅՈՒՆԻՍԵՖ, Հայաստան, 2018

[2] https://clck.ru/ag9XG Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման հավելված

Բուլինգը կարող է դրսևորվել ինչպես իրական կյանքում, այնպես էլ՝ առցանց: Այս երևույթը կոչվում է կիբեր-բուլինգ, որը տեղի է ունենում սոցիալական ցանցերի, SMS-ների, էլեկտրոնային փոստի կամ ցանկացած առցանց հարթակների միջոցով:

Համաձայն ՅՈՒՆԻՍԵՖ-ի նոր զեկույցի[3]՝ աշխարհում 13–15 տարեկան աշակերտների կեսը՝ 150 մլն երեխա, ասել է, որ դպրոցում կամ դպրոցի տարածքում հասակակիցների կողմից բռնության է ենթարկվել:

«Ամենօրյա դաս. «Վերջ բռնությանը դպրոցներում» զեկույցում[4] հասակակիցների միջև բռնությունը, որն իր մեջ ներառում է և՛ դասընկերների կողմից կատարվող բուլինգը, և՛ ֆիզիկական բռնությունը, երիտասարդների կրթության անբաժան մասն է դարձել: Այն վատ է անդրադառնում աշակերտների կրթության և բարեկեցության վրա թե՛ աղքատ, թե՛ հարուստ երկրներում հավասարաչափ:

Զեկույցի տվյալներով՝ աշխարհում մի փոքր ավելի, քան 13–15 տարեկան յուրաքանչյուր 3 աշակերտից 1-ը ենթարկվել է բուլինգի և գրեթե նույնքանն էլ ենթարկվել է ֆիզիկական բռնության:

39 զարգացած երկրներում 10 աշակերտից 3-ն ասել է, որ բուլինգի է ենթարկել իր դասընկերոջը:

Աշխարհում մոտ 720 միլիոն աշակերտ ապրում է այնպիսի երկրներում, որտեղ բռնությունը դպրոցներում օրենսդրորեն ամբողջապես արգելված չէ:

Տղաներն ու աղջիկները հավասարապես են ենթարկվում բուլինգի, սակայն աղջիկներն ավելի հավանական է՝ հոգեբանական բռնության, իսկ տղաները՝ ֆիզիկական բռնության զոհ դառնան:

Աշխարհի երեխաների կեսը կամ գրեթե 1 միլիարդ երեխա ենթարկվում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական բռնության՝ ստանալով վնասվածքներ, հաշմանդամություն ձեռք բերում կամ մահանում, որովհետև պետությունները ձախողել են հետևել հաստատված ռազմավարությանը՝ նրանց պաշտպանելու համար: Այս մասին է խոսվում Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ), ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Միավորված ազգաերի կազմակերպության (ՄԱԿ) գլխավոր քարտուղարի՝ Երեխաների հանդեպ բռնության հարցերով հատուկ ներկայացուցչի և «Վե՛րջ բռնությանը» համագործակցության կողմից հրապարակված նոր զեկույցում[5]:

Երեխաների հանդեպ բռնության կանխարգելման համընդհանուր դրությունը 2020 թվականի զեկույցն իր տեսակի մեջ առաջինն է, որ ներկայացնում է 155 երկրում գրանցված առաջընթացը «INSPIRE» ծրագրի շրջանակում, որը 7 ռազմավարությունների շարք է՝ երեխաների հանդեպ բռնությունը կանխարգելելու և երեխաների հանդեպ բռնությանը արձագանքելու համար: Զեկույցն այս ուղղությամբ իրականացվող քայլերի խթանման հստակ անհրաժեշտություն է տեսնում բոլոր երկրներում: Թեև գրեթե բոլոր երկրներում (88%) անհրաժեշտ օրենքներ կան երեխաներին բռնությունից պաշտպանելու համար, կեսից էլ պակաս երկիր (47%) է նշել, որ դրանք խստորեն կիրառվում են:

Զեկույցում առաջին անգամ են տվյալներ ներկայացվել աշխարհում 18 տարին չլրացած երեխաների շրջանում տեղի ունեցած սպանությունների վերաբերյալ, նախորդ գնահատականները ներառել են 18-19 տարեկանների մասին տվյալներ:

---

[3] https://clck.ru/dXvG2 Աշխարհում դեռահասների կեսը դպրոցում կամ դպրոցի տարածքում ենթարկվում է բռնության իրենց հասակակիցների կողմից. ՅՈՒՆԻՍԵՖ, 2018

[4] https://clck.ru/dXvG2 Աշխարհում դեռահասների կեսը դպրոցում կամ դպրոցի տարածքում ենթարկվում է բռնության իրենց հասակակիցների կողմից. ՅՈՒՆԻՍԵՖ, 2018

[5] https://clck.ru/ag9VC Գործակալությունները նախազգուշացնում են՝ պետությունները ձախողում են երեխաների հանդեպ բռնության կանխարգելումը, ՅՈՒՆԻՍԵՖ, 2020

Ըստ զեկույցի[6]՝ 2017 թվականին շուրջ 40.000 երեխա սպանության զոհ է դարձել: Ընդհանուր առմամբ, առաջընթացն անհավասար է: ««INSPIRE» ծրագրի ռազմավարություններից միայն մեկի՝ գրանցման միջոցով դպրոց ընդունվելու գործարկումով է պայմանավորված ամենամեծ առաջընթացը: Այսպես՝ երկրների 54% -ը զեկուցել է, որ այս եղանակով հայտնաբերվել է կարիքավոր երեխաների բավականին մեծ թվաքանակ: 37% երկրներում բռնության զոհ դարձած երեխաները կարող են օգտվել աջակցություն տրամադրող ծառայություններից: Միևնույն ժամանակ, երկրների 26% -ն է տրամադրել ծնողներին և խնամակալներին ուղղված աջակցության ծրագրեր: Պետությունների 21% -ը ծրագրեր է իրականացրել վնասակար վարքագծերը փոխելու համար, իսկ 15% -ը փոփոխություններ է իրականացրել երեխաների համար անվտանգ վայրեր ապահովելու համար»:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Երեխաների կարծիքով…»[7] հետազոտության համաձայն՝ Հայաստանում երեխաների 38%-ը տեսել է, թե ինչպես են համայնքում երեխայի ծեծում, իսկ 35%-ը նվազագույնը 1–5 անգամ դպրոցում ծաղրանքի ականատես է եղել:

Երեխաների 35%-ը դպրոցներում տեսել է բռնության դեպքեր այս կամ անցած տարվա ընթացքում առնվազն 1–5 անգամ: Սա նշանակում է, որ գրեթե յուրաքանչյուր երկրորդ երեխան դպրոցում ականատես է եղել բռնության: Ավելին, հարցվածների 38%-ը պատասխանել է, որ այս կամ նախորդ տարի իրենց դպրոցում կամ համայնքում տեսել է ինչ-որ մեկին հարվածելիս:

Հարցմանը մասնակցել են 12, 14 և 16 տարեկան երեխաներ:

ՀՀ-ը հայտնել է իր պարտավորվածությունը բոլոր տեսակի մարմնական պատիժներն արգելելու համար՝ միանշանակորեն ընդունելով դա անելու հանձնարարականները, որոնք կատարվել էին Հայաստանի Համընդհանուր պարբերական վերանայման ընթացքում 2010 և 2015 թվականներին: Կառավարությունը զեկուցել է, որ արգելումը ներառված է Ընտանեկան օրենսդրության փոփոխությունների նախագծերում: Հայաստանը հանդես է գալիս որպես ճանապարհը հարթող երկիր Գլոբալ Համագործակցությամբ՝ Վերջ դնելու երեխաների հանդեպ բռնությանը, որը հիմնադրվել է 2016 թվականին[8]:

2015 թվականին ՀՀ կառավարությունն ընդունել է մարմնական պատիժը բոլոր միջավայրերում արգելելու առաջարկությունը, որն արվել էր Հայաստանի Համընդհանուր պարբերական վերանայման ընթացքում և հաստատել, որ արգելումը կներառվի Ընտանեկան օրենսդրության մեջ՝ որպես փոփոխությունների նախագծեր: (7 Ապրիլի 13, 2015թ., A/HRC/29/11, աշխատանքային խմբի հաշվետվություն, պարբ. 120(117), հունիսի 5, 2015թ., A/HRC/29/11/Add.1, աշխատանքային խմբի հաշվետվություն. հավելված, պարբ. 120(117))

Երեխաների նկատմամբ բռնությունը բացասական ազդեցություն է ունենում երեխայի զարգացման վրա և մեծացնում է հետագայում նրա կողմից բռնության կիրառման ռիսկը: Երեխաների նկատմամբ բռնության խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել 2017 թվականին հրապարակված «ՀՀ մարդու իրավունքների

[6] https://clck.ru/ag9VC Գործակալությունները նախազգուշացնում են՝ պետությունները ձախողում են երեխաների հանդեպ բռնության կանխարգելումը, ՅՈՒՆԻՍԵՖ, 2020
[7] https://clck.ru/ag9ow «Երեխաների կարծիքով…» « Սեյվ դը չիլդ ռեն», Վորլդ Վիժն, 2017
[8] https://clck.ru/ag9W6 Երեխաների մարմնական պատիժը Հայաստանում, 2018

պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում[9]» իրավական վերլուծությամբ:

Հայաստանում երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի նիստի 51 արձանագրային որոշմամբ հաստատվել է երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը:

Հայաստանի Հանրապետությունում երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը մշակվել է՝ հիմք ընդունելով «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի դրույթները: Հայեցակարգը նպատակաուղղված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի և «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիաների, Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի և Հայաստանի Հանրապետության միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը[10]:

Հայեցակարգում ևս արձանագրված է, որ պետության կողմից սահմանված չեն բռնության երևույթի գնահատման չափանիշները, դրսևորման ձևերի, տարածվածության մասին տեղեկատվությունները և այլն: «Կարևորելով բռնության բոլոր ձևերից երեխայի պաշտպանված լինելու իրավունքը և երեխայի հանդեպ բռնության, անտեսման երևույթի կանխարգելումը, հայեցակարգը սահմանում է երեխայի հանդեպ բռնության երևույթի կանխարգելմանը, վերացմանը և վերականգնմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները և սկզբունքները: Պետության կողմից դեռևս սահմանված չեն բռնության երևույթի գնահատման չափանիշները, դրսևորման ձևերի, տարածվածության մասին տեղեկատվությունը, շահագրգիռ մարմինների համաձայնեցված արձագանքման և գործունեության մեխանիզմները: Բացակայում են բռնության ենթարկված երեխաների վերականգնողական ծառայությունները և երևույթի կանխարգելմանն ուղղված միջոցառումները, ձևավորված չէ նաև հասարակության կողմից երևույթի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքը:

Հասարակության մեջ բռնության երևույթի առկայության մասին են վկայում մասնակի հետազոտությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր տեղեկությունները, ինչպես նաև տարբեր ծառայություններից, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից ստացված տեղեկությունները[11]»:

Երեխայի հանդեպ բռնությունը

1. Երեխայի հանդեպ բռնություն՝ նրա իրավունքների և ազատությունների սահմանափակում, անվտանգության խախտում և անձի արժանապատվության ոտնահարում, ցանկացած վարքագիծ, որի կիրառումը կարող է վնաս հասցնել երեխայի ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը և զարգացմանը.

2. Երեխայի հանդեպ սեռական բռնություն՝ հանցագործություն երեխայի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ.

3.Երեխայի հանդեպ ֆիզիկական բռնություն՝ երեխային ծեծելը, կամ այլ բռնի գործողություններ կատարելը,

[9] https://clck.ru/ag9Wa ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում, 2017

[10] https://clck.ru/ag9XG Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման հավելված

[11] https://clck.ru/ag9XG Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման հավելված

խոշտանգելը, մարմնական վնասվածք հասցնելը կամ մարմնական պատժի ենթարկելը.

4.Երեխայի հանդեպ հոգեբանական բռնություն՝ երեխայի հանդեպ հուզական և հոգեբանական դիտավորյալ ներգործությունն է, իր զարգացման համար անհրաժեշտ կապվածությունից և հուզական կապերից զրկելը, որը կարող է խոչընդոտել կամ խաթարել երեխայի հոգեկան, մտավոր և վարքային զարգացմանը.

5.Երեխայի անտեսում՝ երեխայի կենսապահովման համար հիմնական պահանջմունքներից դիտավորությամբ կամ անփութությամբ զրկելը, որի հետևանքով երեխան հայտնվում է կյանքի և զարգացման համար վտանգավոր ու անպաշտպան իրավիճակում[12]:

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ. ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Հայաստանում բուլինգի վերաբերյալ հետազոտությունները քիչ են, այս երևույթը մեր երկրում գրեթե ուսումնասիրված չէ: ՀՀ-ում չկան իրավական կարգավորումներ բուլինգի կանխարգելման վերաբերյալ:

Բուլինգի դրսևորումներին որոշակիորեն անդրադառնում են՝

1989 թվականին ընդունված ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան

1996 թվականին ընդունված «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը

1999 թվականին ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքը

2017 թվականին ընդունված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը

2009 թվականին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը

Սույն հետազոտության ընթացքում պարզվել է, որ Շիրակի մարզի աշակերտների գերակշիռ մասն անտեղյակ է իր իրավունքներից և պարտականություններից: Այսպիսով, արձանագրվում է, որ պետական հանրակրթական դպրոցներում կա աշակերտների իրազեկվածության պակասի խնդիր:

«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները, Երեխայի իրավունքների ոլորտում իրավական վերլուծություն» հետազոտության[13] (2017) համաձայն՝ «Երեխաների խոսքերով՝ իրենց իրավունքները հիմնականում խախտվում են դպրոցում՝ ուսուցիչների կողմից ոչ համարժեք վերաբերմունքի, խոսելաոճի, պատժամիջոցների ընտրության, ինչպես նաև ավագ դպրոց տեղափոխվելուց՝ նոր դասարանում հայտնվելու և դժվարություններ ունենալու հետ կապված: Երեխաների կողմից առանձին քննարկվել է արդեն նշված ահաբեկումը (bullying)՝ երեխաների կողմից միմյանց հալածելու, դասարանում առանձնացվողներին ճնշելու և անհանգստացնելու, առանձին աշակերտներին մեկուսացնելու երևույթը, որի դեպքում դպրոցի ղեկավարությունը հիմնականում կամ անտեղյակ են, կամ համարժեք միջոցներ չեն ձեռնարկում: Քննարկման արդյունքում պարզ դարձավ, որ դպրոցականների կողմից թույլերին հալածելու դեպքում հնարավոր է դիմել դպրոցի ղեկավարությանը, ինչը սակայն, ըստ երեխաների, գրեթե անիմաստ է: Ամենաշատը, ինչ կարող է

[12] https://clck.ru/ag9XG Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման հավելված

[13] https://clck.ru/ag9Wa ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում, 2017

տեղի ունենալ՝ մեղավորի հեռացումն է դպրոցից, որով հիմնահարցը չի լուծվում և տեղափոխվում է փողոց: Երեխաների՝ միմյանց հանդեպ կիրառվող բռնության կանխարգելման առումով դպրոցների ղեկավարության թույլ և անտարբեր (անտեղյակ) դիրքորոշման հետևանքներից է, որ երեխաները դպրոցում պաշտպանված լինելու համար հիմնականում դիմում եմ սեփական ընկերական միջավայրին: Այսպես, երեխաների խոսքերով, տղաները հիմնականում ստեղծում են իրենց ընկերական («եղբայրական») շրջապատը՝ միմյանց շահերը նաև ուժային մեթոդներով պաշտպանելու համար, ինչը նաև այլոց հանդեպ բռնության պատճառ է դառնում: Ինչ վերաբերում է աղջիկներին, ապա ոմանք նույնպես փորձում են շփվել դպրոցում վերոնշյալ իմաստով «հեղինակավոր» տղաների հետ՝ իրենց կողմից պաշտպանվածություն ունենալու նպատակով: Միևնույն ժամանակ, երեխաների վկայությամբ, այս ճանապարհը նույնպես ռիսկային է: Երեխաների կարծիքով, իրենք հիմնականում ունեն հոգեբանի, ինչպես նաև երեխաների իրավունքների գծով մասնագետների խորհրդի կարիքը:

Միևնույն ժամանակ, երեխաների՝ մասնագետին դիմելը, իրենց կարծիքով, խոչընդոտված է հայաստանյան հասարակության մեջ առկա կարծրատիպերով»:

2017 թվականին այս զեկույցով ՀՀ ՄԻՊ-ն արձանագրեց, որ ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմները դեռևս հստակ չեն:

«Ինթրա» հոգեբանական ակումբ հասարակական կազմակերպության իրականացրած հետազոտության արդյունքների համաձայն՝ աշակերտները տարբեր կերպ են ճանաչում և ընկալում բուլինգը: Ըստ աշակերտների՝

- **Բուլինգը իրավունքների ոտնահարում է**
- **Բուլինգը ծաղրանքն ու վիրավորանքն է աշակերտների և ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունում**
- **Բուլինգը ֆիզիկական հալածանքն է**
- **Բուլինգը կարող է դրսևորվել գաղտնի և անթաքույց**
- **Բուլինգը ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունն է**

Ծրագրի հոգեբաններից Մարինե Եղիազարյանը, որն աշակերտների մասնակցությամբ դասընթացներ է անցկացրել, ասում է, որ աշակերտները դասընթացի ընթացքում փոխել են իրենց վերաբերմունքը բուլինգի նկատմամբ:

«Դասընթացի շրջանակներում անցկացվող բուլինգի թեման, ինչպես ցույց տվեց պրակտիկան, աշակերտների կողմից ընդունվեց: Իրենց համար հետաքրքիր էր և ընկալելի: Թեմայի մասին աշակերտները խոսում էին շատ բաց, օրինակներով, նշում իրենց զգացողությունները, փորձում կողքից նայել իրավիճակին և նշել քայլերի հեթականություն, թե ինչպես կարելի է վարվել նման դեպքերում: Խմբային դինամիկան ցույց տվեց, որ շատ հաճախ խմբի շրջանակներում «բուլլեր» հանդիսացող երեխան փոխում էր իր վերաբերմունքը երևույթի շրջանակներում և լուծումներ առաջարկում ինչպես լինել բռնությունից զերծ: «Վերապրող» երեխաներն ավելի իրենց ուժեղացած զգալով փորձում էին դիտարկումներ անել, քանի որ ողջ խումբը կարծում էր, որ պետք է ապրումակցել և օգնել իրենց ընկերոջը, որն ունի դրա կարիքը»,-ասում է հոգեբանը:

Հոգեբանի կարծիքով՝ 11 և 12 տարեկան դպրոցականների մոտ անկեղծության շեմը շատ ավելի բարձր է եղել, նրանք շատ հստակ օրինակներով և դերերով են ներկայացրել բուլինգի դեպքերը, որը տվել է հնարավորություն կոնկրետ դեպքի վրա աշխատել:

Երեխայի հանդեպ բռնությունը համընդհանուր խնդիր է: Միջազգային նորմերով այն գնահատվում է որպես

երեխաների հիմնական իրավունքների և ազատությունների խախտում:

Երեխայի պաշտպանության ապահովումը համարվում է պետության հիմնական պարտականություններից[14]:

1989 թվականին Միավորված ազգերի կազմակերպությունն (ՄԱԿ) ընդունել է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, որի 19-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և լուսավորչական միջոցները ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից երեխային ֆիզիկական կամ հոգեկան ճնշման ենթարկելու բոլոր ձևերից, վիրավորանքներից կամ չարաշահումներից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ սեռական չարաշահումը, պաշտպանելու նպատակով:

Պաշտպանության այդպիսի միջոցներն անհրաժեշտության դեպքում ներառում են սոցիալական ծրագրերի մշակման արդյունավետ ընթացակարգեր՝ նպատակ ունենալով պահանջվող աջակցություն ցույց տալ երեխային և այն անձանց, ովքեր հոգ են տանում նրա մասին, ինչպես նաև երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի վերը նշված դեպքերը կանխարգելելու և բացահայտելու, դրանց մասին տեղեկացնելու, քննարկման հանձնելու, հետաքննելու, բուժելու և այդ առթիվ հետագա միջոցներ ձեռնարկելու այլ ձևերի իրականացման, այդ թվում, ըստ անհրաժեշտության, դատական գործ հարուցելու համար:

Կոնվենցիայի 28-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է[15]. «Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները դպրոցական կարգապահությունը երեխայի մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանք արտահայտող մեթոդներով պահպանելու համար և սույն կոնվենցիային համապատասխան»:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն[16]. «1. Երեխան իրավունք ունի ազատորեն արտահայտել իր կարծիքը. այդ իրավունքը ներառում է երեխայի ընտրությամբ բանավոր, գրավոր կամ տպագիր ձևով, արվեստի ստեղծագործության տեսքով կամ այլ միջոցների գործադրմամբ, անկախ սահմաններից, ցանկացած բնույթի տեղեկատվություն և գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունը: 2. Այդ իրավունքի իրագործումը կարող է ենթարկվել որոշ սահմանափակումների, սակայն այդ սահմանափակումները կարող են լինել միայն այնպիսիք, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ա) այլ անձանց իրավունքները և հեղինակությունը հարգելու, կամ բ) պետական անվտանգությունը և հասարակական կարգը (order public), կամ բնակչության առողջությունը և բարոյականությունը պաշտպանելու համար»:

1996 թվականին ընդունված «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը կարգավորում է բռնությունից երեխայի պաշտպանության իրավունքը: «Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի: Երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի

[14] https://clck.ru/ag9ZY ՄԱԿ-ի կոնվենցիան երեխաների իրավունքների մասին, 1989
[15] https://clck.ru/ag9ZY ՄԱԿ-ի կոնվենցիան երեխաների իրավունքների մասին, 1989
[16] https://clck.ru/ag9ZY ՄԱԿ-ի կոնվենցիան երեխաների իրավունքների մասին, 1989

խաղերից և նրա իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից[17]»:

1999 թվականին ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածը կարգավորում է սովորողների իրավունքները և սոցիալական պաշտպանվածությունը: Սույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «…Սովորողների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման մեթոդների կիրառումն արգելվում է»: 2017 թվականին ընդունված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է.«1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց պաշտոնատար անձինք և հասարակական կազմակերպությունները ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում իրենց գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում են՝… 3) երեխայի լավագույն շահերի առաջնահերթության սկզբունքներով[18]»:

Սույն օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է կրթության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմնի լիազորություններն ընտանիքում բռնության կանխարգելման բնագավառում: «1. Ընտանիքում բռնության կանխարգելման բնագավառում Կրթության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը՝ 1) ուսուցիչների և դաստիարակների հետ պարբերաբար անցկացնում է ընտանիքում բռնության կանխարգելման բնագավառում նրանց դերի, ընտանիքում բռնության դեպքերի մասին իրավասու մարմիններին հայտնելու կարգի վերաբերյալ վերապատրաստումներ. 2) ընտանիքում բռնության կանխարգելման նպատակով վերանայում է կրթական ծրագրերը և բացառում ընտանիքում բռնության խրախուսման դրսևորումները դասագրքերում և կրթական նյութերում, ինչպես նաև կրթական ծրագրերում ընդգրկում է նյութեր ընտանիքում բռնության բնույթի, ընտանիքի և հանրության վրա դրա ազդեցության և ավանդական ընտանիքում արժեքների մասին[19]»:

2009 թվականին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն «1. Հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը: 2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը. 1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը…»[20]:

Վերոգրյալը ենթադրում է, որ դպրոցում, ընտանիքում, ինչպես նաև ցանկացած այլ վայրում երեխայի նկատմամբ բռնության դրսևորումներն անթույլատրելի են:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 178-րդ հոդվածը նախատեսում է պատժամիջոցներ երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների (իրավախախտումների) համար[21]:

---

[17] https://clck.ru/X2VwY «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 1996

[18] https://clck.ru/ag9cu «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, 2017

[19] https://clck.ru/ag9cu «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, 2017

[20] https://clck.ru/ag9dM «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 2009

[21] https://clck.ru/ag9dV «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, 1985

ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ գլուխը նախատեսում է պատժամիջոցներ ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների կատարման դեպքում[22]:

Սահմանված պատասխանատվության միջոցները, ընդհանուր առմամբ, համարժեք չեն կատարված արարքներին և անհրաժեշտ է երեխայի հանդեպ կատարված բռնության դեպքերում նախատեսել առավել խիստ պատժամիջոցներ:

ԿԱՐԾԻՔ ԵՆ ՀԱՅՏՆՈՒՄ ՏՆՕՐԵՆՆԵՐՆ ՈՒ ԴԱՍՂԵԿՆԵՐԸ

Ծրագրի շրջանակում խորքային հարցազրույցներ են անցկացվել ընտրված 20 դպրոցի տնօրենի (այդ թվում՝ ժամանակավոր պաշտոնակատար և երկու տեղակալ) և 20 դասղեկի հետ: Ընտրված 40 ուսուցիչները դպրոցներում ունեցել են նվազագույնը 2, իսկ առավելագույնը՝ 45 տարվա աշխատանքային փորձ: 20 դպրոցներից 11-ը Գյումրիում են, իսկ մյուսները Շիրակի մարզի տարբեր համայնքներում:

Ընդհանուր առմամբ, հարցմանը մասնակցած 40 ուսուցչից ոչ մեկը չի հաստատել, որ աշխատանքային գործունեության ընթացքում դպրոցում ականատես է եղել սեռական բռնության դեպքի:

Դպրոցների տնօրենների կարծիքները

Հարցված տնօրենների 25 տոկոսը պատասխանել է, որ իրենց աշխատանքային գործունեության ընթացքում դպրոցում ինչպես աշակերտների միջև, այնպես էլ ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում ականատես չի եղել ոչ ֆիզիկական, ոչ հոգեբանական, ոչ սեռական բռնության դեպքի:

Բռնության դեպքերի ականատես չեղած տնօրենների 50 տոկոսը գյուղական համայնքների դպրոցների տնօրեններ են:

Հարցումների ընթացքում պարզվել է, որ դպրոցների տնօրենների մի մասը աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում չի ցանկանում ճանաչել բուլինգը: Երևույթը հիմնականում բնորոշում են դեռահաս տարիքին: Ըստ հարցված տնօրենների՝ երեխաներն այդ տարիքում ձգտում են ինքնահաստատման, ինքնադրսևորման և դպրոցն անում է հնարավորինն այն կանխարգելելու ուղղությամբ, սակայն կանխարգելման ուղիների համակարգված մշակումը դպրոցի պարտականություններից դուրս է:

Հետաքրքիրն այն է, որ դպրոցների տնօրենները բռնության դեպքերի ականատես լինելու դեպքում հակված են ինքնուրույն հարթել խնդիրը՝ այն թողնելով դպրոցի ներսում, կամ ծնողներին դպրոց հրավիրելով: Այսկերպ բռնության, բուլինգի կանխարգելման ուղիներ չեն մշակում: Խնդրի համակարգված կանխարգելումը համարում են գործադիր և օրենսդիր մարմինների անելիք:

Դպրոցների տնօրենները տարբեր կարծիքներ ունեն բռնարարի և տուժողի հետ երկխոսության ձևաչափի վերաբերյալ: Մի մասը կարծում է, որ երկու կողմի հետ պետք է զրուցել դեմ առ դեմ, մյուսները՝ առանձին-առանձին: Այսինքն՝ խնդրի կարգավորման նկատմամբ չկա ընդհանուր և միասնական ձևաչափ, մոտեցում: Բացի այդ, ոչ բոլոր դպրոցներն ունեն հոգեբաններ ու դասղեկներ, տնօրենները ստիպված են լինում ստանձնել հոգեբանի դեր, ինչը ևս խնդրահարույց է:

Հարցված տնօրենների 42.8 տոկոսը զրույցի ընթացքում հաստատել է, որ որպես մանկավարժ դպրոցականների՝ միմյանց ծաղրելը, վիրավորելը չի համարում բռնության դեպք, որակում է որպես «կատակ, երեխայական

[22] https://clck.ru/Z3hTn ՀՀ քրեական օրենսգիրք, 2003

չարաճճիություն», որոնք դպրոցում դասղեկները, հոգեբանները կանխել են հնարավորինս արագ:

Հարցված տնօրենների 30 տոկոսը հաստատել է, որ աշխատանքային գործունեության ընթացքում ականատես է եղել աշակերտների միջև հոգեբանական բռնության դեպքերի՝ ծաղրանք, վիրավորանք:

Հարցված տնօրենների 35 տոկոսը հաստատել է, որ աշակերտների միջև, բացի հոգեբանական բռնության դեպքերի, ֆիզիկական բռնության դեպքի ևս ականատես է եղել, իսկ 15 տոկոսը պատմել է, որ աշխատանքային գործունեության ընթացքում՝ տարիներ առաջ, նախկին աշխատավայրում ուսուցչի մասնակցությամբ ֆիզիկական բռնության դեպքի ականատես եղել է: Դպրոցների տնօրենները նշել են, որ բռնության ցանկացած դեպք կանխարգելում են շատ արագ:

Գծապատկեր 1



Ըստ հարցվածների՝ հոգեբանական բռնության դեպքերի հիմնականում կարելի է հանդիպել դեռահաս տարիքի դպրոցականների շրջանում: Հարցված տնօրենների 60 տոկոսը աշակերտների միջև հոգեբանական բռնության հիմնական պատճառ նշում են՝ դեռասության տարիքին բնորոշ՝ ինքնահաստատման, ինքնադրսևորման ձգտելու առանձնահատկությունները, 30 տոկոսը՝ աշակերտի՝ նոր միջավայրում սովորելը, 10 տոկոսը՝ արտաքին տեսքն ու սոցիալական կարգավիճակը:

«Երբ ուրիշ դպրոցից աշակերտ է տեղափոխվում մեկ այլ միջավայրով դպրոց, նա այդ հաստատության սովորողների ուշադրության կենտրոնում է հայտնվում: Հատկապես դեռահաս տարիքում նրան փորձում են նեղել, որպեսզի տեսնեն վերջինիս ռեակցիան: Մենք՝ տնօրեններս ու դասղեկներս, ուշադիր ենք նորեկներին, և ամեն ինչ անում ենք կանխարգելելու նման վատ երևույթները»:,-ասում է քաղաքային դպրոցի տնօրենը:

Դպրոցների տնօրենների 100 տոկոսը հարցմանը պատասխանել է, որ դպրոցում բռնության երևույթի ականատես լինելու դեպքում նախ ինքնուրույն կհարթի խնդիրը: Որպես առաջին քայլ՝ տնօրենները պարզելու են բռնության ծագման բուն պատճառը, ապա՝ կանխարգելելու են, հաշտեցնելու են կողմերին՝ հոգեբանական զրույցի, մանկավարժական վարպետության միջոցով: Հաջորդ քայլը, ըստ տնօրենների, ծնողների հետ հոգեբանական զրույցների անցկացումն է: Որպես երրորդ քայլ՝ տնօրենները նշում են տարածքային համայնքային կառույցների համապատասխան բաժինների օգնության դիմելը:

«Մեր իրավասության շրջանակներում պիտի փորձենք հարցը կարգավորել: Բացատրել, ընտանիքի

անդամների հետ աշխատել: Եթե տեսնենք, որ մեր իրավասությունից դուրս է, կդիմենք գյուղապետարանին, մարզպետարանի համապատասխան բաժին: Միշտ այդ կապը եղել է, համագործակցում ենք»:

«Առաջին հերթին պետք է կանխել այդ երևույթը: Ի սկզբանե մթնոլորտը, միջավայրն այնպիսին պիտի լինի, որ երեխաներն իմանան, որ իրենք բոլորը հավասար իրավունքներ ունեն դպրոցում՝ սովորելու, դասին ներկա լինելու, գրադարանից օգտվելու, դպրոցի նյութատեխնիկական բազայից հավասար օգտվելու իրավունք: Աշակերտները գիտեն՝ կա հատուկ կանոնակարգ, որտեղ նշված է, որ բոլորն ունեն հավասար իրավունքներ ու պարտականություններ. ընկերոջը չպետք է վիրավորեն, միմյանց նկատմամբ չպետք է լինեն բռանարար, չպետք է իրար ծեծեն, հարվածեն»:

Տնօրենները տարբեր կարծիքներ ունեն բռնություն գործադրողի և բռնության ենթարկվածի հետ խոսելու ձևաչափի վերաբերյալ: Հարցվածների 75 տոկոսը կարծում է, որ պետք է կողմերի հետ խոսել առանձին՝ բռնության կանխարգելման ուղիներ փնտրելիս, իսկ 15 տոկոսի կարծիքով հաշտեցման համար կողմերի հետ անհրաժեշտ է խոսել երկուստեք, ապա՝ առանձին, մյուս խմբի կարծիքով՝ պարտադիր 3-րդ կողմի ներկայությամբ, որը հանդես կգա որպես վկա:

Հարցված տնօրենների 60 տոկոսը Հայաստանում բռնությունների թվի աճը պայմանավորում է սոցիալ-տնտեսական ծանր, անկայուն պայմաններով, 25-ը տոկոսը՝ համացանցի, հեռուստատեսության տարածած, հեռարձակած բռնության դեպքերի մասին պատմություններով, 5 տոկոսը՝ ազգային կարծրատիպերով, 10 տոկոսը՝ ոչ պատշաճ իրազեկմամբ և գրագիտության պակասով:

Գծապատկեր 2



«Ինձ համար ակնհայտ է համացանցային տեսահոլովակների ազդեցությունը երեխաների հոգեբանության վրա: Շատ դաժան տեսարաններով, ընդհուպ՝ մինչև սպանություն, ծեծ. այսինքն՝ դա խրախուսվում է համացանցային տեսահոլովակներով՝ միլիոններով դիտումներ ունեն և, բնականաբար, երեխաները միգուցե նաև ուզում են նմանվել այդ «հերոսներին»»:

Հարցված տնօրենների 30 տոկոսը պատմել է, որ աշխատանքային գործունեության ընթացքում զրուցել է բռնության ենթարկված դպրոցականների հետ, որոնք ընտանիքներում ունեցել են սոցիալական, անուշադրության, խնամքի պակասի խնդիրներ: Նման երեխաներն առաջին հերթին ունեն հոգածության, խնամքի, ուշադրության, սիրո կարիք:

«Այդ երեխաներին անհրաժեշտ է սեր, նրանց հարկավոր է լսել, ուշադրության կարիք ունեն: Ես մանկատանն եմ աշխատել: Այն երեխաները, որոնք բռնության են ենթարկված եղել, պարփակված են եղել, իրենց վարքով էլ

ցույց են տվել, որ սիրո, հոգատարության կարիք ունեն: Անընդհատ փաթաթվում էին, գրկում, որ շոյենք իրենց: Երբ խնդիր են ունենում, շատ են ոգևորվում, երբ լսում ես իրենց»:

«Խնամքի հաստատությունում զրուցել եմ նման երեխայի հետ: Այդտեղ երեխաներ կային, որոնք ընտանիքներում ունեին խնդիրներ: Ծնողական խնամքից զրկված են եղել: Այդ երեխաներն ունեն հոգածության, ուշադրության կարիք»:

Հարցվածների կարծիքով՝ հաճախ սովորողները, ընտանիքներում ունենալով խնդիրներ, կամ ենթարկվելով բռնության, դպրոցում մեկուսանում են, չեն շփվում:

«Մեկ-երկու դեպք ունեցել ենք, երբ ընտանեկան վիճակի հետևանքով երեխայի ագրեսիվությունը նկատվել է: Ծնողի վարքն անդրադարձել է երեխայի վրա: Դասղեկը, մենք զրուցել ենք երեխայի հետ, այդ երեխան դուրս է եկել ծանր վիճակից» :

«30-ամյա աշխատանքային փորձը ցույց է տվել, որ այն երեխան, որն ինչ-որ մի կերպ ճնշվում է դպրոցում, ճնշված է նաև տանը; Այսինքն՝ տանից է գալիս, ընտանիքից այդ բռնությունը, որը տեղափոխում է դպրոցական դաշտ» :

«Աշակերտն այլ դպրոցից էր եկել, երեխաները, կարծես, նեղում էին որպես նորեկի: Ամեն դեպքում սաստել ենք: Երեխան մոտեցել է ինձ, պատմել, մենք կանխել ենք ամեն ինչ: Հիմա նորմալ դասընթաց է: Այդ երեխան կարիք է ունեցել աջակցության, մենք աջակցել ենք»:

Դպրոցներում բռնության ցանկացած ձևի դրսևորման կանխարգելման կարևոր միջոց տնօրենների 100 տոկոսը համարում է ընտանիք-դպրոց-աշակերտ արդյունավետ աշխատանքը: Հարցված տնօրենների 75 տոկոսը միաժամանակ առանձնացնում է ընտանեկան դաստիարակության դերը:

«Առաջին աշխատանքը տանելու է ընտանիքը, որը ոչ ոք չի կարող ժխտել կամ հակառակը պնդել, ընտանիքը տալիս է դաստիարակության 95 տոկոսը, մյուս 5 տոկոսը՝ դպրոցը: Եթե դպրոց-ընտանիք-աշակերտ եռյակը գործի միասնական ու նույն նպատակի համար, ապա արդյունքը շատ լավը կլինի: Հիմա առաջվա տարիները չեն, հիմա ծնողները փոխվել են ամեն ձևով, ծնողն իր երեխային որպես մեղավոր չի ընդունում, համարում է, որ իր երեխան ու ինքն են ճիշտը… անջրպետ կա: Երբ այդ անջրպետը հաղթահարվի, բոլոր տեսակներն էլ, այդ թվում՝ բռնությունը, կկանխարգելվի» :

«Մինչև եռանկյունին ամուր չլինի երեք կողմով՝ ընտանիք-դպրոց-աշակերտ, ոչինչ չի ստացվի. ծնող-դպրոց-աշակերտ համագործակցությունը պիտի շատ ամուր լինի: Դպրոցը պետք է ընտանիքի հետ համագործակցի, որի կիզակետում պետք է լինի աշակերտը: Եթե այստեղ մի կողմը թերանում է, ուրեմն երբեք հաստատակամություն չի լինի»:

«Բռնության կանխարգելումը պետք է ընտանիքից և միջավայրից սկսել, դպրոցում այդ գործը հեշտ է կատարել, բայց դպրոցից դուրս գալուց հետո այդ երևույթը կշարունակվի աշակերտի թաղում, տանը, իսկ դա կանխարգելելը մի քիչ դժվար է»:

Հարցմանը մասնակցած տնօրենների 15 տոկոսը, բացի ընտանիք-դպրոց-աշակերտ օղակի արդյունավետ աշխատանքից, որպես կանխարգելման միջոց համարում է դպրոցներում աշակերտների հետ հոգեբանական զրույցները, կրթադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումն ու բռնությունների, բռնությունների կանխարգելման մասին իրազեկման աշխատանքները՝ տեսահոլովակների, ֆիլմերի միջոցով:

«Երեխաների համար հարկավոր է հաճախակի կազմակերպել հոգեբանական զրույցներ, միայն ընդհանուր դասարանի հետ չպիտի լինի: Եթե ուսուցիչները, դասղեկները չափազանց ուշադիր լինեն, բացատրական աշխատանքն ավելին լինի ոչ միայն երեխաների, այլև ընտանիքների հետ՝ տեսաֆիլմերի, զեկուցումների միջոցով, ապա հնարավոր է կանխարգելել բռնությունը: Այս տարբերակով ծնողներն էլ կլինեն իրազեկված, որ անթույլատրելի է երեխայի նկատմամբ բռնություն գործադրել: Երեխան պիտի հասկանա, որ չպիտի լինեն նվաճողներ և նվաճվողներ, երեխան իր ընտանիքում պիտի զգա ապահով, հարգված, լսված, դպրոցում՝ նաև: Կարծում եմ, որ կանխարգելման ամենալավ տարբերակը մշտական զրույցն է երեխաների, ուսուցիչների հետ»:

«Պետք է ճիշտ դաստիարակել աշակերտներին, հաճախակի կազմակերպել դաստիարակչական բնույթի զրույցներ, միջոցառումներ, որոնք մեծ նշանակություն կունենան երեխայի կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար»:

Մյուս 10 տոկոսը կանխարգելման տարբերակ է համարում նաև դասընթացների հաճախակի կազմակերպումն ու անցկացումը ինչպես դպրոցների բազմամասնագիտական թիմերի, այնպես էլ աշակերտների համար, ընդ որում՝ առաջարկելով դասընթացներին ներկայացնել բռնությունների կանխարգելման նոր մեթոդներ ու միջոցներ:

«Հոգեբանական աջակցությունը շատ կարևոր է, բացի այդ, նաև սեմինարներ, դասընթացների կազմակերպումն է առաջնային: Կարելի է դեռահասների համար ևս կազմակերպել բռնության կանխարգելման միջոցներին նվիրված դասընթացներ: Անհրաժեշտ է, որ այդ սեմինարներն անցկացնեն 3-րդ կողմի՝ անկախ մասնագետների միջոցով, որոնք նորամուծություններ կներկայացնեն»:

Դասարանների դասղեկների կարծիքները

Խորքային հարցազրույցների են մասնակցել նաև Շիրակի մարզից 20 դասղեկ, որից 9-ը՝ Գյումրուց, մյուսները՝ տարբեր համայնքների դպրոցներից: Հարցված դասղեկների 35 տոկոսը պատասխանել է, որ իրենց աշխատանքային գործունեության ընթացքում դպրոցում չի հանդիպել բռնության որևէ դեպքի:

Ինչպես դպրոցների տնօրենները, այնպես էլ դասղեկները բուլինգ երևույթը չեն ցանկանում ճանաչել: Ըստ հարցվածների՝ բուլինգի, բռնության կանխարգելման հստակ գործիքներ դպրոցները չունեն, սակայն հոգեբանական զրույցների միջոցով փորձում են երևույթը կանխարգելել: Թե որքանով է այն հաջողվում, դժվարանում են պատասխանել: Այս առումով կարևոր է առանձնացնել այն փաստը, որ դպրոցները ոչ թե փորձում են կանխարգելել այս արատավոր երևույթը, այլ ժամանակավոր կասեցնել, ինչը այս դեպքում կրկնվելու մեծ հավանականություն ունի: Հետաքրքիր է նաև այն, որ դասղեկները դպրոցներում բուլինգի կանխարգելման հնարավոր եղանակ համարում են ընտանիքներում բռնությունների կանխարգելման անհրաժեշտությունը: Ըստ հարցվածների՝ եթե ընտանիքում արմատացած է երևույթը, ապա դպրոցը գրեթե անզոր է պայքարել բուլինգի դեմ, քանի որ աշակերտն ընտանիքում տեսածը դասարանում, դպրոցում տարածելու ձգտում ունի: Դասղեկների հետ զրույցներում պարզվել է, որ դպրոցներում բռնության, բուլինգի հիմնականում ենթարկվում են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները, մեկ այլ դպրոցից տեղափոխված նորեկ աշակերտները:

Հարցված դասղեկների 5 տոկոսը պատասխանել է, որ բացի աշակերտների միջև առկա հոգեբանական բռնության դեպքերի, ականատես է եղել նաև ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում հոգեբանական բռնության դեպքերի:

Հարցված դասղեկների 50 տոկոսը հաստատել է, որ իրենք ականատես են եղել ոչ թե բռնության դեպքերի, այլ՝ երեխայական չարաճճիության: Վերջիններս երեխայական չարաճճիությունը ներկայացում են որպես կատակի տված վիրավորանք, ծաղրանք, խփոց, հարված, որը դպրոցի ներսում կարողացել են հարթել: Նշված 50 տոկոս դասղեկից 30 տոկոսը եղել են մարզի տարբեր համայնքներից:

«Բռնության դեպքի ականատես եղել եմ աշակերտների հարաբերություններում, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերերությունններում ևս, թեպետ ուսուցչի կողմից դա չի համարվում բռնություն: Բայց երբ մասնագետի աչքերով ենք նայում երևույթին, արդեն այն համարվում է բռնություն: Օրինակ, նկատել եմ ուսուցչի վիրավորելը երեխային : Ուսուցիչն ասում է՝ թույլ է աշակերտը, չի հասկացել, կամ անպատրաստ է, ուշացել է դասից… այս դեպքերում չի կարելի վիրավորել երեխային, կարող է ուղղակի ասել»:

«Աշակերտների միջև եղել են խնդիրներ չարաճճիության միոջոցով, բայց հարթվել են: Հոգեբանական են եղել, չեն հասկացել իրար, փորձել են ճնշել»:

«Աշակերտներն իրար հարվածում են, ծեծում, վիրավորում միմյանց, բայց անմիջապես կանխարգելում ենք» :

Դասղեկների կարծիքով՝ բռնարարքները բնորոշ են հիմնականում դեռահաս տարիքի դպրոցականներին,

որոնք, ըստ հարցվածների, ունեն ինքնադրսևորման, ինքնահաստատման խնդիրներ: Հաճախ դեռահաս տարիքի տղաները դպրոցներում փորձում են նեղել ավելի խեղճ ընտանիքների երեխաներին՝ իրենց հասակակիցներին, դասընկերներին: Օրինակ, կարող է պահանջեն երկար մնալ հերթապահությանը, խելոք երեխայից պահանջեն իրենց սեփական պայուսակը վերցնել, տեղափոխել և այլն:

Հարցված դասղեկներից միայն 5 տոկոսն է հաստատել, որ հոգեբանական բռնության փորձի դեպք գյուղական դպրոցում հանդիպել է ազգային փոքրամասնության ներկայացուցչի նկատմամբ: Դեպքը եղել է գյուղական համայնքի դպրոցում:

«Երեխաները նրա ետևից կանչում էին՝ եզդի…Ես աշակերտների հետ զրուցեցի, բացատրեցի եզդի բառի իմաստը: Աշակերտները հասկացան, որ նրանք ունեն հավասար իրավունքներ, սովորում են հավասար պայմաններում»:

Բռնության դեպքի ցանկացած դրսևորման ականատես լինելու դեպքում 20 դասղեկները, որպես առաջին քայլ, տարբեր մոտեցումներ ունեն: 30 տոկոսը պատասխանել է, որ նախ կպարզի բռնության բուն պատճառը/պատճառները, 35 տոկոսը՝ կկանխարգելի ու կմիջամտի, մյուս 35 տոկոսը, որպես առաջին քայլ, կզրուցի կողմերի հետ: Զրույցներին, անհրաժեշտության դեպքում, կհրավիրի դպրոցի հոգեբանին, տնօրենին, տեղակալին, նաև ծնողին՝ փորձելով ամրացնել դպրոց-ծնող-աշակերտ կապը:

Գծապատկեր 3



«Բռնության կանխարգելման գործընթացը պիտի լինի շարունակական: Կարող է իմ ներկայությամբ երեխան լռի, բայց ես պիտի հետևեմ, որ հաջորդ օրը նրանք իրար հետ շփվեն, խոսեն, նորից ընկերական ջերմ հարաբերությունները վերահաստատեն: Սովորաբար կանխարգելում ենք անհատական մոտեցման, երկու կողմերի հաշտեցման միջոցով: Ամեն մեկին բացատրում ենք, որ դիմացինի նկատմամբ հանդուրժող պետք է լինի և, թերությունների դեպքում, ինչ որ մի տեղ պետք է աչք փակել, եթե ուզում ես ընկեր ունենալ»:

«Հարկավոր է իմանալ բռնության պատճառը, իրավիճակը վերլուծել և, բնականաբար, միջոցներ ձեռնարկել հետագայում նման դեպքի կրկնությունը կանխարգելելու համար: Կարևոր է նաև հոգեբանական զրույցի անցկացումը, եթե չկարողացանք, կդիմենք հոգեբանների, աջակցման կենտրոնների օգնությանը»:

Հարցված դասղեկների 60 տոկոսը Հայաստանում բռնությունների թվի աճը պայմանավորել է հիմնականում սոցիալական անկայուն իրավիճակով, ընտանիքներում սոցիալական խնդիրների սրացմամբ, 5 տոկոսը պատճառ համարել է կրթական մակարդակի ցածր լինելը, 20 տոկոսը բռնությունների թվի պատճառ նշել է սոցիալական ցանցերում բռնության վերաբերյալ տեսահոլովակների, ֆիլմերի առկայությունը: Մյուս 15 տոկոսը միաժամանակ տարբեր պատճառներ է նշել՝ հոգեբանորեն իրար չհասկանալը, դպրոցի նկատմամբ անուշադրության պակասը, համավարակով, հետպատերազմյան իրավիճակով սրված ներքաղաքական անկայուն կյանքը, հիվանդությունների աճը և այլն:

Գծապատկեր 4



«Այն ընտանիքներում, որտեղ տղամարդը բռնարար է, անպայման ինչ-որ հոգեբանական խնդիր ունի երեխան: Նախկինում ավանդական արնտանիքում դուռը փակ է եղել և ոչ ոք ոչինչ չի իմացել, ժամանակին չի խոսվել բռնության մասին, իսկ հիմա պարզապես բարձրաձայնում են և մեզ թվում է, թե բռնության թիվն ավելացել է: Ժամանակին էլ է եղել, կինը տխուր իր անկյունում լաց է եղել, ոչ ոք ոչինչ չի իմացել»:

«Այսօր դպրոցին ուշադրություն չեն դարձնում: Բացի այդ, հեռուստացույցով, համացանցով բռնության մասին ֆիլմերի ցուցադրությունը, հեռախոսները, հաղորդումները դաստիարակչական բնույթի չեն, բոլորն իրենց մեջ կրում են բռնություն: Սովետական տարիներին ևս կային բռնություններ, բայց մենք քիչ գիտեինք դրանց մասին, որովհետև հեռուստացույցը կրթական հաղորդումներ էր ցույց տալիս, մեզ պատմում էր բարու մասին, բռնության մասին չէր պատմում: Իսկ հիմա այդ բռնությունները կան համացանցում, թե ինչպես կարելի է մարդուն վիրավորել, ինչես գողություն անել և այլն, մի՞թե կարելի է: Ինչու սովորեցնել վատ բան»:

Խորքային հարցազրույցների մասնակից դասղեկների 20 տոկոսը կարծել է, որ դպրոցներում բռնության դրսևորման ցանկացած տեսակ կարելի է կանխարգելել դպրոց-ընտանիք-աշակերտ համագործակցության և արդյունավետ աշխատանքի արդյունքում, 10 տոկոսը պատասխանել է, որ կանխարգելումը հնարավոր է դասընթացների, սեմինարների, տեսաֆիլմերի և նորամուծությունների օգնությամբ, ևս 10 տոկոսը կարևորել է դպրոցի ու մանկավարժի դերը, 55 տոկոսը կանխարգելման տարբերակ համարել է աշակերտների, ծնողների հետ հոգեբանական զրույցները, 5 տոկոսը՝ դպրոցի նկատմամբ պետության ուշադրությունը:

Գծապատկեր 5



«Դեռ փոքրուց պետք է աշխատել աշակերտների հետ, հաճախ կրկնել, որ բոլորը հավասար են, մեկի բարձրահասակ կամ կարճահասակ լինելը չի նշանակում մեկը մյուսի նկատմամբ թերություն կամ առավելություն ունի, պիտի անընդհատ այդ հավասարության գաղափարի մասին խոսել, սոցիալական շերտավորման գաղափարը դուրս հանել: Նրանց պատմել, որ մարդիկ ունի հավասար իրավունքներ, հավասար պարտականություններ»:

«Աշակերտներին պետք է մեծ սեր տալ զրույցների միջոցով: Մեր հասարակությունում մեծ խնդիր է սեր տալը, սեր նվիրելը»:

«Հոգեբանական զրույցներով, մանկավարժական փորձով և ծնողի աջակցությամբ կկանխարգելվի բռնությունը: Այդ զրույցները պիտի միշտ լինեն, ոչ թե միայն աշակերտների հասունանալու դեպքում»:

«Եթե յուրաքանչյուր մանկավարժ լինի իր տեղում, պատշաճ կատարի իր պարտականությունները, բռնությունը կանխարգելելու հնարավորություն կունենանք: Մանկավարժը պիտի է լինի հետևողական, սովորողի յուրաքանչյուր շարժմանն ուշադրություն դարձնի, բառի նկատմամբ լինի ուշադիր»:

ԿԱՐԾԻՔ ԵՆ ՀԱՅՏՆՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԸ

Ծրագրի շրջանակում անանուն (առցանց) հարցումներ են կատարվել ծնողների շրջանում: Հարցմանը մասնակցել է 50 ծնող Գյումրու և Շիրակի մարզի տարբեր համայնքներից: Հարցված ծնողների կրտսեր տարիքը եղել է 25, իսկ ավագը՝ 55: Հարցվածների 56 տոկոսը եղել է իգական, իսկ 44 տոկոսը՝ արական սեռի ներկայացուցիչ: 67 տոկոսը եղել է Գյումրու, իսկ 33 տոկոսը Շիրակի մարզի տարբեր համայնքներից:

Ծնողների հետ անցկացված հարցումների արդյունքների համաձայն՝ բռնության դեպքերի վերաբերյալ տեղեկությունները, այսպես ասած, մնում են տանը կամ դասարանում, դրանք որպես ահազանգ չեն ներկայացվում գերատեսչություններին, մարզպետարաններին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ու ՀՀ ոստիկանությանը: Ծնողն ինքն է որոշում ինչպես արձագանքել բռնության դեպքերին: Գերակշիռ դեպքերում միակ ճանապարհը, ըստ հարցման արդյունքների, դպրոցն է, որտեղ ծնողը դասղեկի կամ տնօրենի հետ քննարկում է խնդիրը և ժամանակավոր լուծում տալիս: Այսինքն՝ այս դեպքում ևս ծնողների գերակշիռ մասը շահագրգռված չէ այդ մասին հրապարակային բարձրաձայնել և պահանջել համակարգված լուծում: Սա, ըստ հարցման արդյունքների, պայմանավորված է ազգային մտածելակերպով, երբ կարելի է խնդիրը հարթել առանց բարձրաձայնելու:
«Էլ չի կրկնվի, ես խոսել եմ ուսուցչի հետ, ուշադիր կլինենք: Այսպես էր ասել ինձ դասղեկը, սակայն երեխաների միջև հրմշտոցը, վիրավորական բառերը շարունակվում էին: Ես ստիպված առանձին խոսեցի այդ երեխաների ծնողների հետ, մենք ծնողներով հարթեցինք խնդիրը»,-պատմում է հարցմանը մասնակցած 35-ամյա ծնողն ու ընդգծում՝ *դպրոցը չի կարող նվազեցնել բռնության դեպքերի թիվը, քանի որ մեծ աշխատանք կա ծնողների հետ:*

Ծնողների 56 տոկոսը տեղեկացրել է, որ երեխան իրենց պատմել է հոգեբանական բռնության դեպքերի մասին, 38 տոկոսը՝ ֆիզիկական, իսկ 6 տոկոսը՝ միաժամանակ երեք բռնության՝ սեռական, հոգեբանական, ֆիզիկական դեպքերի մասին:

Գծապատկեր 6



Հարցված ծնողների 54 տոկոսը պատասխանել է, որ իր երեխան դպրոցում երբևէ չի եղել բռնության զոհ, իսկ 46 տոկոսը հաստատել է:

Գծապատկեր 7



Ծնողների 62 տոկոսը պատասխանել է, որ բռնության մասին խոսել է դպրոցի տնօրենի կամ դասղեկի հետ, վերջիններիս տեղեկացրել այդ դեպքերի մասին, մյուս 38 տոկոսը հարցին բացասական պատասխան է տվել:

Գծապատկեր 8



Գյումրու դպրոցներում սովորող երեխաներ ունեցող ծնողները, ըստ հարցման արդյունքների, ավելի ակտիվ են եղել (79 տոկոս) բռնության դեպքերի մասին դասարանների դասղեկներին կան դպրոցների տնօրեններին տեղեկացնելիս:

Ի՞նչ կանեիք, եթե Ձեր երեխան դպրոցում ենթարկվեր բռնության. հարցին ծնողները տարատեսակ պատասխաններ են տվել: 60 տոկոսը պատասխանել է, որ կդիմեր դասղեկին և տնօրենին, 5 տոկոսը՝ կդիմեր ոստիկանություն, 15 տոկոսը՝ երեխային կտեղափոխեր այլ դպրոց, 20 տոկոսը՝ առանձին կզրուցեր ուսուցչի հետ:

Առաջին երեք տեսակի պատասխանները հիմնականում տվել են Գյումրու դպրոցներում սովորող աշակերտների ծնողները, մյուս համայնքների ծնողները մեծ մասամբ ընտրել են ուսուցչի հետ զրուցելու տարբերակը:

Գծապատկեր 9



Հարցված ծնողների 85 տոկոսը պատասխանել է, որ բռնությունն իրենց համար հալածանք է, ճնշում, 12 տոկոսը՝ իրավունքների ոտնահարում ու ազատության սահմանափակում, իսկ 3 տոկոսը՝ ուժի գործադրում, հոգեբանական ճնշում:

Գծապատկեր 10



ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՈՒԼԻՆԳԸ՝ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՉՔԵՐՈՎ

Ծրագրի շրջանակում անանուն հարցմանը (այդ թվում՝ առցանց) մասնակցել է 1000 դպրոցական՝ 10-18 տարեկան: Հարցմանը մասնակցած դպրոցականների 77 տոկոսը Գյումրու պետական հանրակրթական դպրոցների սովորողներ են եղել, իսկ 23 տոկոսը՝ Շիրակի մարզի տարբեր համայնքների:

Հարցմանը մասնակցել են նաև ՀՀ տարբեր մարզերից, նաև արտասահմանից վերադարձած և Գյումրու,

Շիրակի մարզի պետական հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտներ։

Գյումրու պետական հանրակրթական դպրոցների 77 տոկոս աշակերտների 7 տոկոսը թեպետ սովորել է քաղաքային դպրոցում, սակայն բնակության վայրը եղել է գյուղական համայնքը։

Հարցմանը մասնակցած դպրոցականների 47 տոկոսը եղել է արական սեռի, իսկ 53 տոկոսը իգական սեռի ներկայացուցիչ։

Տարիքային առումով մեծամասնություն են կազմել 12, 13 և 14 տարեկանները։

Այսպիսով, հարցմանը մասնակցած սովորողների 0.5 տոկոսը եղել է 10 տարեկան, 7.7 տոկոսը՝ 11, 17.8 տոկոսը՝ 12, 19.5 տոկոսը՝ 13, 20.2 տոկոսը՝ 14, 14 տոկոսը՝ 15, 10.3 տոկոսը՝ 16, 8.2 տոկոսը՝ 17, 1.8 տոկոսը՝ 18։

Գծապատկեր 11



Հարցված դպրոցականների 9 տոկոսը պատասխանել է, որ իր դպրոցական տարիներին դպրոցում ենթարկվել է բռնության, հարցվածների 3.40 տոկոսը չի պատասխանել հարցին, իսկ 87.60 տոկոսը պատասխանել է, որ բռնության չի ենթարկվել դպրոցում։

Բռնության ենթարկվածների մեջ գերակշիռ մաս են կազմում 13, 14 տարեկան տղաները և 16 տարեկան աղջիկները։ Նրանց 95 տոկոսը, որպես բռնության դրսևորում, նշել են հոգեբանական ազդեցությունը, ծաղրանքը, վիրավորանքը աշակերտների շրջանում։ Մյուս 5 տոկոսը ուսուցիչների մասնակցությամբ բռնության դեպքերն են ընդգծել՝ դասից ուշանալու, դասին պատրաստ չլինելու դեպքում, ըստ նրանց, ուսուցիչը վիրավորել է իրենց։

Գծապատկեր 12



Հարցվածների 67 տոկոսը պատասխանել է, որ, ընդհանուր առմամբ, ականատես է եղել բռնության դեպքերի, հարցին չի պատասխանել հարցվածների 11 տոկոսը, իսկ 22 տոկոսը պատասխանել է, որ ականատես չի եղել բռնության դեպքերի։

Բռնությանն ականատես սովորողների 52.7 տոկոսը պատասխանել է, որ բռնության դեպքերի ականատես եղել է փողոցում, 1.40 տոկոսը՝ տանը, իսկ 13.10 տոկոսը՝ դպրոցում։ Մյուսները չեն պատասխանել հարցին։

Գծապատկեր 13



Սովորողների 0.80 տոկոսը պատասխանել է, որ դպրոցում ականատես է եղել սեռական բռնության դեպքի, 10.50 տոկոսը՝ ֆիզիկական, 18 տոկոսը՝ հոգեբանական, միաժամանակ ֆիզիկական և հոգեբանական բռնության դեպքերի ականատես եղել է 5 տոկոսը, հարցվածներից մնացածն ականատես չի եղել բռնության դեպքերի։

Գծապատկեր 14



Դպրոցում ականատես եղած սովորողների 8.80 տոկոսը պատասխանել է, որ բռնության դեպքերի ականատես է եղել դասասենյակներում, 4.70 տոկոսը՝ դպրոցի անկյուններում, 4.10 տոկոսը՝ սանհանգույցում, 1 տոկոսը՝ հանդերձարաններում, մյուսները չեն պատասխանել հարցին կամ նշել են «այլ» տարբերակ՝ չհստակեցնելով տարածքը, մյուսները գրել են՝ «դպրոցի վերնահարկում»։ Դպրոցի տարածքից դուրս բռնության դեպքերի ականատես է եղել հարցվածների 66. 4 տոկոսը։

Գծապատկեր 15



Հարցվածների 58.6 տոկոսը պատասխանել է, որ դպրոցում բռնության դեպքի ականատես լինելու դեպքում տեղյակ է պահում դասարանի դասղեկին, հարցվածների 18.3 տոկոսը պատասխանել է, որ օգնում է բռնության ենթարկվածին, 10 տոկոսը՝ պատմում է հարազատներին, բայց ոչ մի քայլ չեն ձեռնարկում, 0.3 տոկոսը զանգում է թեժ գիծ, իսկ 5 տոկոսը՝ տեղեկացնում դպրոցի տնօրենին։

Հարցվածների 24.80 տոկոսը պատասխանել է, որ դպրոցում հանդիպել է հոգեբանի, ով հետաքրքրվել է, զրուցել է աշակերտների հետ բռնության դեպքերի վերաբերյալ, 29 տոկոսը պատասխանել է, որ այս մասով հանդիպել է անչափահասների գծով տեսուչի/ոստիկանի։ 42.30 տոկոսը պատասխանել է, որ այս մասով ոչ մեկի չի հանդիպել դպրոցում, իսկ 3.90 տոկոսը հարցին չի պատասխանել։

Գծապատկեր 16



Հարցվածների 48.4 տոկոսը պատասխանել է, որ դպրոցում անցկացվել են դասղեկական ժամեր, իրազեկման հանդիպումներ կամ այլ միջոցառումներ բուլինգի մասին, 47.4 տոկոսը հարցին բացասական պատասխան է տվել, չի պատասխանել 4.2 տոկոսը:

Հարցվածների 82.1 տոկոսը դպրոցը համարել է ապահով ու անվտանգ, հարցին չի պատասխանել 5. 6 տոկոսը, հարցին՝ «մասամբ» է պատասխանել 0.8 տոկոսը, իսկ 11.5 տոկոսը դպրոցն համարել է ոչ ապահով և ոչ անվտանգ: Նրանցից 53.9 տոկոսը չի հիմնավորել, թե ինչու է դպրոցը ոչ ապահով, ոչ անվտանգ: Մյուսները տարբեր պատասխաններ են տվել «որովհետև կան անկարգ աշակերտներ», «որովհետև դպրոցում ծաղրում են, վիրավորում», «կան բռնարար սովորողներ», «դպրոց կարող են մտնել կողմնակի անձինք», «հրդեհներից պաշտպանված չէ դպրոցը» և այլն: Նման պատասխաններ են տվել հիմնականում 12 տարեկան տղաներն ու 16 տարեկան աղջիկները:

Հարցված դպրոցականների 80.5 տոկոսը պատասխանել է, որ հնարավոր է դպրոցում հարթել ամեն խնդիր, բացասական է պատասխանել 13. 3 տոկոսը, հարցին չի պատասխանել 6. 2 տոկոսը:

Ըստ հարցվածների 62.5 տոկոսի՝ մարդիկ բռնություն են գործադրում ինքնահաստատվելու, ինքնադրսևորվելու, ուշադրություն գրավելու համար: Հարցվածների մյուս մասը տարբեր պատասխաններ են տվել՝ վրեժից, նախանձից, չարությունի, անզորությունից:

Հարցվածների 66.3 տոկոսը չի ցանկացել պատմել դպրոցի ուսուցչի կամ աշակերտի մասնակցությամբ բռնության դեպքերի մասին:

Հարցին պատասխանած դպրոցականների 0.9 տոկոսը նկարագրել է աշակերտների միջև առկա ներանձնային, ներխմբային կոնֆլիկտները, որոնք հետագայում վերածվել են հիմնականում հոգեբանական բռնությունների՝ ծաղրանք, վիրավորանք:

Մյուս 4.4 տոկոսը պատմել է ուսուցչի մասնակցությամբ բռնության դեպքերի մասին, որոնք հիմնականում ծագել են դասից ուշանալու, դասին պատրաստ չլինելու պատճառներով, երբ ուսուցիչը վիրավորել է

աշակերտին, փորձել ապտակել:

Հարցվածների 22.4 տոկոսը պատասխանել է, որ դպրոցում ինքը աշակերտի կամ ուսուցչի մասնակցությամբ բռնության դեպքի ականատես չի եղել, չի կարող պատմել: 6.9 տոկոսը պատասխանել է, որ ինքը գոհ է դպրոցի ուսուցչական անձնակազմից, իրենց լավ գիտելիքներ են տալիս և ուսուցչի դիտողությունը չի համարում բռնություն:

Հարցումների ընթացքում աշակերտներն հնարավորություն են ունեցել հակիրճ պատմել այնպիսի բռնության/բուլինգի դեպքերի մասին, որոնց ականատես են եղել: Ցավոք, այդ պատմություններում կան նաև ուսուցիչների մասնակցությամբ բռնության դեպքեր: Հարցմանը մասնակցած աշակերտների գերակշիռ մասը պատմել է աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում առկա բուլինգի դրսևորումների մասին, երբ ուսուցիչը դասից ուշացած, դասը լավ չսովորած երեխային ծաղրել է, վիրավորել: Ըստ աշակերտների՝ ուսուցիչներն աշակերտների նկտամամբ ունեն տարբերակված մոտեցում և վերաբերմունք, որի պատճառով իրենք ենթարկվում են հոգեբանական ճնշման: Բացի այդ, 15 և 16 տարեկան աղջիկները պատմել են, որ ուսուցիչներն իրենց դասարանում վիրավորում են, երբ տեսնում են իրենց հարդարած և ներկած վարսերով, երբեմն պահանջում են հագնվել միօրինակ, միանման, ինչն անընդունելի է իրենց համար:

Հարցումները ցույց են տվել, որ աշակերտների միջև բուլինգը դրսևորվում է հիմնականում երեք հանգամանքով՝

1. աշակերտի արտաքին տեսք, (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաներ),

2.սոցիալական խտրականություն. անապահով ընտանիքների երեխաները մեկուսացված են և թիրախավորված:

3. գնահատականի ազդեցություն. առաջադեմ սովորող երեխաները գրեթե միշտ դասարանում շերտավորում են ստեղծում, խմբեր ձևավորում, որոնց հետ ցանկություն ունեն շփվելու:

Հիմնականում այս երեք հանգամանքով է պայմանավորված աշակերտների շրջանում միջանձնային և միջխմբային կոնֆլիկտների ծագումը, որոնք հետագայում վերածվում են բռնության, բուլինգի դեպքերի:

Աշակերտների նկարագրած մի քանի պատմություն՝

«Դասասենյակում տղան հոգեբանական ճնշում էր գործադրում աղջկա վրա, ծաղրում նրան, վիրավորում»:

«Աշակերտը բարձրաձայնել էր իր ընտրած մասնագիտության մասին, որին ի պատասխան «Աղջիկ էրեխա ես, ամոթ է, քո ինչ խելքի բանն է» պատասխանեցին:

«Երեխան մի քանի րոպեով ուշացավ դասից, ուսուցչուհին ներս չէր թողնում մտնել»:

«Մի անգամ ես իմ վարսերը բաց էի թողել, ուսուցիչը տեսավ և այնքան բղավեց ինձ վրա, որ ես վատ զգացի դասընկերներիս մոտ, ես հիմա ստիպված հավաքում եմ վարսերս»:

«Ուսուցիչն առանց իմանալու, թե իրականում ինչ է եղել, սկսել էր հարվածել հիվանդ երեխային»:

«Երբ ուսուցիչը հարվածում է երեխային, իսկ երեխան ճնշվում է»:

«Դասարանցիներիցս մեկին իր աչքի տեսողության պատճառով սկսել են ծաղրել»:

«Աշակերտին համոզել են, որ նա քննությունը չի հանձնելու»:

«Մի անգամ ես հիվանդացել էի և չէի կարող մասնակցել դասերին: Հաջորդ օրը ես գնացի դպրոց անպատրաստ, ոչ մի դասի տեղ չգիտեի, դասի ժամանակ ինձ խփեցին և դասարանից դուրս հանեցին»:

«Աշակերտին անպատվելը, վիրավորելը, գրքով հարվածելը ես համարում եմ մարդու իրավունքների խախտում»:

«Երբ աշակերտը դիտողությունից հետո իրեն վատ է պահել, ուսուցիչը հարվածել է աշակերտին»:

«Ես հոգեբանական բռնության ականատես եմ եղել, խոսքը գնում է ուսուցչի և աշակերտի շփման մասին, երբ ուսուցիչը հոգեբանական ճնշում է գործադրում երեխայի վրա»:

«Երբ դասարանի և ուսուցչի մոտ ծաղրում և վիրավորում են աշակերտին»:

«Շատ հաճախ է լինում, երբ աշակերտին հասկացնում են, որ նա ինչ որ բանով տարբերվել է մյուսներից և հիմա նա ավելի վատն է դարձել»:

«Մի անգամ դասարանիս երկու տղա իրար են ծեծել, պատճառը չեմ հիշում»:

«Ծաղրում են աշակերտին արտաքինի համար, աշակերտը կարող է տանել հոգեբանական տրավմա»:

«Երբ ուսուցիչը բղավում է աշակերտի վրա կամ փորձում խփել»:

«Երբ մեկը մյուսին ծաղրում է թե սանրվածքի, թե ամեն ինչի համար»:

«Ուսուցիչը բռնությամբ ստիպել է երեխային նստել մեկ այլ նստարանի»:

«Չեմ մատնանշի թե ով է, բայց ուսուցիչն իրեն ճիշտ չի պահում, երեխաներին անվանելով՝ հիմար, տգետ»:

«Երեխան դասին չէր լսում և դասի ժամին զբաղվում էր, ուսուցիչը տեսնելով, բարկացավ և վատ բառերով երեխայի ծնողներին վիրավորեց: Դրանից հետո ապտակեց երեխային»:

«Ուսուցիչը վիրավորել է աշակերտին՝ նկատի ունենալով նրա թույլ լինելը և պատասխանելու, հակադարձելու անկարողությունը»:

«Ես նկատել եմ, որ գրեթե բոլոր դասարաններում գոյություն ունի այնպիսի աշակերտ, որին ճնշում են իր նյութականի համար»:

«Աշակերտի նկատմամբ տեղի է ունեցել բռնություն, երբ նա ունի մտավոր խնդիրներ և նրան օգտագործել են իր թույլ լինելու պատճառով, նրան վիրավորանք են հասցրել և նսեմացրել են արժանապատվությունը»:

«Մենք մի դասատու ունեինք, երբ երեխան վատ էր սովորում, ոչ թե ցածր գնահատական էր դնում, այլ՝ ծեծի ենթարկում»;

Հարցվածների 56.7 տոկոսը չի ցանկացել կարծիք հայտնել, թե դպրոցում բռնության ցանկացած դրսևորում կանխարգելելու համար ինչ քայլեր կարելի է նախաձեռնել: Հարցվածների 65 տոկոսը պատասխանել է, որ հարկավոր է բռնարարի հետ զրուցել, ցուցաբերել հոգեբանական աջակցություն, 15 տոկոսը՝ դիմել ոստիկանության աջակցությանը: Մյուսները տվել են տարբեր պատասխաններ՝ աշակերտին պատասխանատվության ենթարկել, հեռացնել դպրոցից:

Համեմատական վերլուծություն Գյումրու և մյուս համայնքների դպրոցների սովորողների պատասխանների միջև

Ինչպես նշվեց զեկույցում, անանուն հարցման են մասնակցել նաև Շիրակի մարզի տարբեր համայնքների, այդ թվում՝ գյուղական պետական հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտներ, որոնք հարցվածների շուրջ 23 տոկոսն են կազմել:

Ի տարբերություն Գյումրու պետական հանրակրթական դպրոցների, մարզի մյուս համայնքների դպրոցականները պատասխանել են, որ ավելի հաճախ են հանդիպել դպրոցում անչափահասների գծով

ոստիկանների/տեսուչների, որոնք իրենց հետ զրուցել են բռնության դեպքերի և բուլինգի մասին: Հարցվածների 42.6 տոկոսը դրական է պատասխանել, Գյումրիում դրական պատասխան է տվել հարցվածների 24.9 տոկոսը:

Եթե Գյումրու պետական հանրակրթական դպրոցների հարցվածների 11.03 տոկոսն է դպրոցն համարել ոչ ապահով և ոչ անվտանգ, ապա մարզի մյուս դպրոցների սովորողներից հարցվածների՝ 13.04 տոկոսը: Հետաքրքիրն այն է, որ և Գյումրու, և մարզի մյուս պետական հանրակրթական դպրոցների աշակերտները նույն ռիսկերն են մատնանշել՝ «որովհետև դպրոցում կան անկարգապահ աշակերտներ», «դպրոցում կողմնակի անձինքն են մտնում», նման ռիսկեր հիմնականում մատնանշել են 12, 14 տարեկան տղաներն ու 16 տարեկան աղջիկները:

Եթե Գյումրու դպրոցների աշակերտները գերակշիռ դեպքերում նշել են, որ բռնության ականատես լինելու դեպքում տեղյակ են պահում դասղեկին, (73.2 տոկոս), ապա մարզի մյուս դպրոցականները, որպես առաջին քայլ, մատնանշել են բռնության ենթարկվածին օգնելը: Նման պատասխան է տվել հարցվածների 25.2 տոկոս:

Բռնության դեպքերի ականատես լինելու դեպքում Գյումրու հարցված դպրոցականների 8.3 տոկոսը և մարզի մյուս համայնքների պետական հանրակրթական դպրոցների հարցված սովորողների 7.3 տոկոսը պատասխանել է, որ դեպքի մասին պատմում է հարազատներին, բայց ոչ մի քայլ չի ձեռնարկում:

Գյումրիում հարցված դպրոցականների 40.1 տոկոսը նշել է, որ դպրոցում բռնության դեպքի ականատես չի եղել, իսկ մարզի մյուս դպրոցականների՝ 12.9 տոկոսը:

Գյումրիում հարցվածների 56. 8 տոկոսը պատասխանել է, որ ավելի հաճախ բռնության դեպքերի ականատես է լինում փողոցում, նույն հարցին միևնույն պատասխանն է տվել մյուս մարզի հարցված դպրոցականների 74.3 տոկոսը:

Տանը բռնությունների ականատես եղած դպրոցականների թվաքանակը ևս տարբեր է: Գյումրիում հարցվածների 1.03 տոկոսն է դրական պատասխանել հարցին, մյուս համայնքների դպրոցականների՝ 2.6 տոկոսը:

Գյումրու պետական հանրակրթական դպրոցներում ավելի հաճախ բռնությունների ականատես եղած դպրոցականները կազմել են 13.6 տոկոս, իսկ մարզի մյուս համայնքներում՝ 37.3 տոկոս.

Գյումրիում հարցված դպրոցականների 17.1 տոկոսը պատասխանել է, որ իր դպրոցական տարիներին դպրոցում ականատես է եղել հոգեբանական բռնության դեպքի, մարզի մյուս համայնքներում այս հարցին դրական է պատասխանել հարցվածների 20.8 տոկոսը:

Դպրոցում ֆիզիկական բռնության դեպքի ականատեսների տոկոսը Գյումրիում հարցված դպրոցականների շրջանում կազմել է 9.8 տոկոս, իսկ մարզի մյուս համայնքների դպրոցականների շրջանում՝ 12.6 տոկոս:

Դպրոցում և հոգեբանական, և ֆիզիկական բռնության դեպքի ականատեսների տոկոսը Գյումրիում հարցված դպրոցականների շրջանում կազմել է 5.5 տոկոս, իսկ մարզի մյուս համայնքների դպրոցականների շրջանում՝ 3.04 տոկոս:

Դպրոցում սեռական բռնության դեպքի ականատեսների տոկոսը Գյումրիում հարցված դպրոցականների շրջանում կազմել է 0.77 տոկոս, իսկ մարզի մյուս համայնքների դպրոցականների շրջանում՝ 0.86 տոկոս:

Ի տարբերություն Գյումրու պետական հանրակրթական դպրոցների հարցված աշակերտների, մարզի մյուս համայնքների դպրոցների սովորողները մեծամասամբ բռնության դեպքերը նկարագրել են որպես 3-րդ անձ, դեպքի՝ որպես վկա կամ ականատես, մինչդեռ Գյումրու հարցված դպրոցահասակները պատմություններում իրենց ներառել են որպես բռնության ենթարկվածների:

հանրակրթական դպրոցներում գրանցվել է ֆիզիկական բռնության 11 դեպք, որից 3-ի վերաբերյալ տեղեկությունը ստացվել է ծնողներից, իսկ 1 դեպքի վերաբերյալ տեղեկությունը ստացվել է բժշկական հաստատության ահազանգի միջոցով, 7 դեպքի վերաբերյալ տեղեկությունը ստացվել է ոստիկանների կողմից անձնական հետամտությամբ:

2019 թվականին հանրակրթական դպրոցներում գրանցվել է բռնության 27 դեպք, որից 25-ը՝ ֆիզիկական, 1 դեպք սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված և 1 դեպք հոգեբանական: Հինգ դեպքի վերաբերյալ տեղեկությունը ստացվել է ծնողներից, 1 դեպքի վերաբերյալ բժշկական հաստատության ահազանգի միոջոցով, 21 դեպքի վերաբերյալ տեղեկությունը ստացվել է ոստիկանության ծառայությունների կողմից անձնական հետամտությամբ:

2020 թվականին հանրակրթական դպրոցներում գրանցվել է ֆիզիկական բռնության 7 դեպք, որից 2-ի վերաբերյալ տեղեկությունը ստացվել է ոստիկանության ծառայողների կողմից անձնական հետամտությամբ:

2021 թվականին հանրակրթական դպրոցներում գրանցվել է բռնության 17 դեպք, որից 16-ը ֆիզիկական և 1 դեպք սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված: Հինգ դեպքի վերաբերյալ տեղեկությունը ստացվել է ծնողներից, 3-ի վերաբերյալ տեղեկությունը ստացվել է ուսուցիչներից, 3 դեպքի վերաբերյալ տեղեկությունը ստացվել է բժշկական հաստատության ահազանգի միջոցով, 6-ը դեպքի վերաբերյալ տեղեկությունը ստացվել է ոստիկանության ծառայողներից՝ անձնական հետամտությամբ:

«Յուրաքանչյուր բռնության դեպքի առթիվ ոստիկանությունում ահազանգ ստանալու դեպքում ոստիկանությունն իրականացնում է գործող օրենսդրությամբ ոստիկանությանը վերապահված գործառույթներ: Մասնավորապես դեպքի վերաբերյալ ընդունվում է հաղորդում, կատարվում է նախաքննություն, բավարար հիմքերի դեպքում հարուցվում քրեական գործ:

Բացի այդ, ոստիկանությունը անչափահասների կողմից կամ վերջիներիս նկատմամբ բռնության դեպքերը նախականխելու նպատակով պարբերաբար ոստիկանության ստորաբաժանումների վարչական տարածքում գործող դպրոցներում մասնագիտացված ստորաբաժանման ծառայողների կողմից անց է կացվում հանդիպումներ, զրույց-զեկույցներ:

Որոշ դեպքերում՝ եթե իրավախախտում կատարողը անչափահաս է, վերջինս պրոֆիլակտիկ կանխարգելիչ հաշվառման է վերցվում ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումում, որտեղ գործող կարգի համաձայն նրա նկատմամբ իրականացվում է կանխարգելիչ միջոցառումներ»,-փոխանցել են ՀՀ ոստիկանությունից:

Ըստ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) տեղեկությունների՝ 2018 թվականին երեխաների իրավունքների վերաբերյալ ստացվել է 445 բողոք, 2019-ին՝ 700, 2020-ին՝ 2121:

Նույն աղբյուրի փոխանցմամբ՝ 2018 թվականին ստացվել է 4 բողոք երեխաների նկատմամբ բռնության

[23] https://clck.ru/ag9nq Դպրոցներում բռնության դեպքերի վիճակագրությունը.ներկայացնում են ՄԻՊ-ն ու Ոստիկանությունը, asparez.am, 28.12.2021

վերաբերյալ, 2019-ին՝ 42, 2020-ին՝ 56։

Ինչպես «Ասպարեզին» են գրավոր փոխանցել ՄԻՊ-ից, նշված բողոքները գրավոր մուտքագրվել են ՄԻՊ-ի աշխատակազմ, տրվել են խորհրդատվություններ աշխատակազմ այցելած կամ աշխատակազմի հեռախոսահամարներին զանգահարած քաղաքացիներին, ինչպես նաև թեժ գծի հեռախոսահամարով ներկայացված հարցումների արդյունքում տրամադրվել են իրավախորհրդատվություն և դրանց կապակցությամբ կատարվել գործողություններ։

Այսպիսով, ՄԻՊ-ի տվյալներով, ինչպես երեխաների իրավունքների խախտման, այնպես էլ երեխաների նկատմամբ բռնությունների թիվը վերջին 3 տարում ավելացել է։

«Պաշտպանին ուղղված բողոքները հիմնականում վերաբերել են դպրոցում երեխաների նկատմամբ բուլինգի դեպքերին, որին դպրոցի անձնակազմը պատշաճ չի արձագանքում։ Արձանագրվել է նաև դեպք, երբ դրոցում երեխան մյուս երեխաների կողմից ենթարկվել է վատ վերաբերմունքի՝ ֆիզիկական բռնության։ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով բարձրացվել է նաև ծնողի ենթադրյալ վարքագծով և ուսուցիչների, և ծնողի միջև միջանձնային հարաբերություններով պայմանավորված ուսուցիչների կողմից երեխաներին թիրախավորելու հարցը։

«Պաշտպանին ուղղված բողոքներին պատշաճ կարգով ընթացք է տրվել «Մարդու իրովունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված կարգով և ժամկետներում։

Երեխաների իրավունքների պաշտպանության Պաշտպանի գործունեությունն առավել մանրամասն ներկայացված է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումներում»,-փոխանցել է ՄԻՊ-ը։

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի շրջանակում Շիրակի մարզպետին և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին գրավոր հարցումներ են ուղարկվել՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում 2018-2021 թվականներին արձանագրված բռնության դեպքերի վիճակագրության վերաբերյալ։

Շիրակի մարզպետարանը գրավոր պատասխանել է, որ 2018 թվականից մինչ օրս Շիրակի մարզպետարանը մարզային ենթակայության դպրոցներում բռնության վերաբերյալ որևէ գրավոր ահազանգ չի ստացել։ 2018 թվականից մինչ օրս Շիրակի մարզպետարանը նաև ոչ գրավոր, ոչ բանավոր բռնության դեպքի մասին բողոք չի ստացել ուսուցիչներից կամ աշակերտների ծնողներից։

«Շիրակի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում կատարվող բռնության դրսևորման դեպքում Շիրակի մարզպետարանը ձեռնարկում է ուսումնասիրություն։ Ուսումնասիրության ամբողջության ընթացքում իրականացվում են համապատասխան ուղղորդումներ՝ առանցքում ունենալով երեխայի լավագույն շահը և կրթական իրավունքի ապահովման շարունակականությունը»,-տեղեկացրել է Շիրակի մարզպետարանը։

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը «ԻՆԹՐԱ» հոգեբանական ակումբ» հասարակական կազմակերպության հարցմանն ի պատասխան տեղեկացրել է, որ նախարարությունում բռնության դեպքերի գրանցման հատուկ ընթացակարգ, ընդհանուր դիմումների գրանցման համատեքստում, նախատեսված չէ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Բուլինգի վերաբերյալ եզրահանգումներ

Հարցումների արդյունքում պարզվել է, որ Շիրակի պետական հանրակրթական դպրոցներում բուլինգի դրսևորումներն ու պատճառները հիմնականում պայմանավորված են երեք խնդրով՝ ազգային մտածելակերպով, կրթական համակարգի որոշ թերություններով և դեռահաս տարիքն բնորոշ առանձնահատկություններով:

- *Աշակերտները, նաև դպրոցների հոգեբաններն ավելի շատ են ձգտում տեղեկություններ ստանալ բուլինգի դրսևորման, պատճառների մասին:*
- *Հարցումները ցույց են տվել, որ հարցված տնօրենների 42.8 տոկոսը, ուսուցիչների 30 տոկոսը և աշակերտների 19.9 տոկոսը միջին դասարանների աշակերտների՝ միմյանց ծաղրելը, հարվածելը չի համարում բուլինգ, այլ անվանում է «երեխայական չարաճճիություն»: Իսկ ահա ավագ դասարանների աշակերտներն ու այդ դասարանների դասղեկներն արդեն իսկ նույն երևույթը համարում են հոգեբանական բռնության դեպք:*
- *Դպրոցներում կան որոշ ուսուցիչներ, որոնք տարբերակված մոտեցում ունեն որոշ աշակերտների նկատմամբ:*
- *Դպրոցներում կան աշակերտներ, որոնք տարբերակված մոտեցում ունեն որոշ ուսուցիչների նկատմամբ:*
- *Աշակերտները կարծիք, տեսակետ հայտնելու և լսելի դառնալու կարիք ունեն:*
- *Աշակերտները լավատեղյակ չեն իրենց իրավունքների ու պարտականությունների մասին: Հաճախ որոշ դպրոցներում դասամիջոցին, դասասենյակում աշակերտները տարբեր խնդիրների շուրջ վիճում էին, իրար էին վիրավորում, միմյանց վիրավորական բառերով դիմավորում, սակայն ուսուցիչներից ոչ մեկը չէր սաստում նրանց, չէր փորձում կանխարգելել երևույթը: Երևույթը հիմնականում կրում էր հոգեբանական բնույթ:*
- *Բուլինգի ականատես աշակերտների և ուսուցիչների, տնօրենների գերակշիռ մասը փորձում է անձամբ միջամտել խնդիրը, ինքնուրույն հարթել, սակայն լուծման արդյունավետության ցուցիչ չկա:*
- *Բուլինգի տեսանկյունից խոցելի են հիմնականում մեկուսացված, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներն ու նորեկ աշակերտները:*
- *Դպրոցներում աշակերտների, ուսուցիչների հստակ վարքականոնի, կարգուկանոնի մեխանիզիմների անհրաժեշտություն կա:*

Բռնության վերաբերյալ եզրահանգումներ

- *Դպրոցում ուսուցիչների, աշակերտների մի խումբ չի ճանաչում բռնության երևույթը կամ չի ուզում ճանաչել*

«Եթե կրտսեր տարիքից երեխան չի ճանաչում բռնության դեպքերը, ապա նրա համար դժվար է ավագ տարիքում այդ բռնությունը կանխարգելել: Նույն միջին տարիքի երեխան, եթե մշտապես ծաղրանքի թեմա է եղել, կամ իր քայլերով ծաղրանքի առիթ է ստեղծել, ապա ավագ դասարանում ավելի մեծ խնդիրների առջև է

կանգնելու, նրան միշտ ծաղրելու են: Փորձը ցույց է տվել, որ եթե երեխան ճնշվում է դպրոցում, ապա ճնշվում է նաև տանն ու փողոցում»,-ասում է դպրոցներից մեկի հոգեբանն ու ավելացնում՝ եթե մասնագետի աչքերով ենք նայում, ապա դպրոցներում բուլինգի դեպքերը չափազանց շատ են:

Ծրագրի հոգեբաններից Օլգա Ջավադյանն ասում է, որ իրազեկող հանդիպումների ընթացքում պարզել են, որ բուլինգի, բռնության մասին տեղեկացված են եղել այն դպրոցների ուսուցչական և աշակերտական անձնակազմերը, որոնց հետ հասարակական կազմակերպություններն աշխատել են բռնության կանխարգելման թեմայի մասով:

«Որտեղ տեղյակ էին բռնության դրսևումների մասին, այնտեղ աշակերտներն ավելի բաց էին խոսում թեմայի մասին»,-ասում է Օ.Ջավադյանը:

- *Ուսուցչի կողմից երեխայի նկատմամբ բռնության դեպքերի հիմնական պատճառներն ու հետևանքները:*

Դասերի ընթացքում հաճախ էր պատահում, երբ որոշ դպրոցներում դիմակ չկրած, ոտքի չկանգնած, դասին անպատրաստ աշակերտին ուսուցիչը թիրախավորում էր, գոռում վրան՝ դասընկերների մոտ անհարմար իրավիճակ ստեղծում տվյալ աշակերտի համար: Հետաքրքիրն այն է, որ հարցված աշակերտների 19.9 տոկոսը սա չի համարում բռնության դրսևորում, անվանում է ուսուցչի դիտողություն, իսկ ահա դպրոցականների 65 տոկոսը կարծում է, որ ուսուցիչն իրավունք չունի իրեն վիրավորելու ցանկացած պարագայում, միաժամանակ ավելացնում, որ ուսուցչի այդ վիրավորական բառերը կամ բղավոցը դասընկերներն ընդօրինակում են և տարածում դասարանում՝ միաժամանակ թիրախավորելով նույն աշակերտին:

Հարցված աշակերտների 13 տոկոսը բռնությունը համարել է իրավունքի և ազատության սահմանափակում, 6.4 տոկոսը՝ խախտում, 17.6 տոկոսը՝ անձի արժանապատվության ոտնահարում՝ վիրավորանք, ծաղրանք, 8.6 տոկոսը՝ վարքագիծ, որը կարող է վնասել անձի ֆիզիկական և հոգեկան առոջղությունը, 50.1 տոկոսը՝ միաժամանակ իրավունքի և ազատության սահմանափակում, խախտում, անձի արժանապատվության ոտնահարում, վարքագիծ, որը կարող է վնասել անձի ֆիզիկական և հոգեկան առողջությունը: Հարցվածների 4.3 տոկոսը հարցին չի պատասխանել:

- *Աշակերտն իրավունք ունի ազատորեն կարծիք հայտնել, դպրոցականները պարտավոր չեն միանման հագուստ կրել, մինչդեռ դպրոցներում աշակերտների կարծիքի արտահայտման վրա առկա են ճնշման փորձեր:*

Հարցմանը մասնակցած հատկապես 14-16 տարեկան աղջիկները հարցումների ընթացքում պատմել են, որ վարսերը չհավաքած կամ ներկած լինելու դեպքում ուսուցիչներն իրենց կոպտում են, դասարանի ներկայությամբ վիրավորում, որի հետևանքով իրենք հոգեբանորեն կաշկանդվում են:

Հարցումների ընթացքում որոշ դպրոցների վարչական մասի աշխատողներ, ուսուցիչներ փորձում էին աշակերտներին խորհուրդներ տալ հարցաթերթիկի լրացման ընթացքում՝ շեղելով բռնության թեմայից, դպրոցների աշխատակիցների այս փորձերը հնարավորինս կանխարգելվել են ծրագրի փորձագետի, ՀԿ-ի անդամների կողմից՝ աշակերներին խնդրելով լինել անկեղծ, միաժամանակ երաշխավորելով, որ հարցաթերթիկները դպրոցին չեն տրամադրվելու:

- *Դպրոցները տեղեկացնում են՝ իրենք ամեն ինչ անում են բռնության դեպքերի կանխարգելման համար, սակայն ընտանիքի ազդեցությունը մեծ է:*

Հարցված տնօրենների և դասղեկների մեծ մասը նշել է, որ թեպետ բռնությունների կանխարգելման համար աշխատանքներ տանում են, փորձում ամուր պահել դպրոց-երեխա-ծնող օղակը, սակայն եթե ընտանիքում կա

բռնություն, ապա դպրոցն այստեղ չի կարող կանխարգելել խնդիրը, քանի որ բռնության ականատես երեխան սիրում է երևույթը հեղինակել, ընդօրինակել և փոխանցել դասընկերներին։

- *Բռնությունների կանխարգելման մեխանիզմներ չկան, նաեւ ոչ բոլոր դպրոցներն ունեն հոգեբաններ*

Բռնությունների կանխարգելման ուղիները դպրոցներում, մեղմ ասած, անհայտ են։ Կարևոր հարց է՝ ինչպե՞ս է դպրոցը կանխարգելու բռնության դրսևորումը, եթե չունի հոգեբան, հոգեբանական ուղեցույցներ, դասղեկական ժամերին բուլինգի մասին շատ հազվադեպ է խոսվում, կամ գրեթե չի խոսվում։

««Ինթրա» հոգեբանական ակումբ ՀԿ-ն ծրագրի շրջանակում երեք կողմի հետ աշխատանք է տարել՝ դպրոցի, աշակերտի, ծնողի հետ։ Կարծում եմ՝ երեք կողմի հետ աշխատանքը բավականին նպաստող է տվյալ խնդիրը լուծելու համար, որպեսզի հասկանանք, թե որտեղից է սկսվում բռնությունը։ Ծնողները ևս շատ բաց են, թե դասընթացի ընթացքում, թե դասընթացից հետո մոտնում էին մեր հոգեբանին, երկար զրուցում, վերջինս տվել է հոգեբանական աջակցություն»,-ասում է ծրագրի համակարգող Սոնա Հակոբյանը և տեղեկացնում, որ դասընթացներին բաց են եղել նաև աշակերտները։ «*Երբ դպրոցներից մեկում թրեյնինգ էինք անցկացնում, երեխաներից մեկը ներկայացրեց, որ ինքը բուլինգի է ենթարկվել, նա բավականին բաց էր խոսում և ներկայացրեց, թե ինչպես է ուսուցչի կողմից բուլինգի ենթարկվել և ինքը ինչպես է կարողացել հաղթահարել այդ խնդիրը»։*

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բուլինգի կանխարգելման ուղիներ

Պետական հանրակրթական դպրոցներին

- *Բուլինգ երևույթի բացասական նկարագիրը տարեկան մի քանի անգամ տեսանյութերի միջոցով ներկայացնել ուսուցչական և աշակերտական հանրույթին: Աշակերտներին հնարավորություն տալ մասնակցել երևույթի կանխարգելման հնարավոր տարբերակների քննարկմանը:*
- *Աշակերտների կարծիքը, տեսակետը լսելի դարձնելու նպատակով կազմակերպել հարցումներ ու բանավոր քննարկումներ ինչպես ուսումնական գործընթացի բաղադրիչների, այնպես էլ տարատեսակ թեմաների, այդ թվում՝ բուլինգի դրսևորման, պատճառների շուրջ:*
- *Դասղեկական դասաժամերի ընթացքում ավելացնել երեխաների իրավունքների վերաբերյալ դասաժամերը՝ շեշտը դնելով երեխաների նկատմամբ բուլինգի արգելքի վերաբերյալ քննարկումներին, առանցքում ունենալով «բոլորը հավասար են», «բոլորն ունեն հավասար իրավունքներ ու պարտականություններ» գաղափարը:*
- *Դպրոցում ունենալ արկղեր, որտեղ աշակերտներն անանուն գրառումներ կթողնեն իրենց հուզող հարցերի, այդ թվում՝ բուլինգի վերաբերյալ: Մանկավարժական խորհրդի նիստում քննարկել այդ գրառումների բովանդակությունն ու բարձրաձայնված խնդիրների լուծման մեխանիզմներ ներդնել:*

ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը

- *Տարեկան մի քանի անգամ վերապատրաստումներ կազմակերպել ուսուցիչների հոգեբանական և մանկավարժական հմտությունների զարգացման նպատակով:*
- *Դպրոցներում աշակերտների, մանկավարժների հստակ վարքականոնի, կարգուկանոնի մեխանիզիմներ ներդնել:*
- *Ուսուցիչների աշխատանքային իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ ներդնել:*
- *Բուլինգի կանխարգելման նպատակով դպրոցում ձևավորել մասնագիտական թիմ, որը կաշխատի և աշակերտի, և ծնողի, և ուսուցչի հետ:*

Բռնության կանխարգելման ուղիներ

Պետական հանրակրթական դպրոցներին

- *Բռնությունների ծագման, կանխարգելման ուղիների վերաբերյալ ընդլայնել դասընթացները դպրոցներում, որոնց մասնակցելու հնարավորություն կունենան և ուսուցիչները, և աշակերտները, և ծնողները, այդ դասընթացներն անցկացնեն վերապատրաստում անցած հոգեբանները:*
- *Առաջին դասարանից սկսած՝ երեխաների հետ իրականացնել հատուկ դասընթացներ, խաղեր և զրույցներ՝ քննարկելու և կանխարգելելու իրենց կողմից միմյանց հանդեպ բռնի վերաբերմունք ցուցադրելու հնարավոր ռիսկերը:*

ՀՀ կառավարությանը

- *Հաստատել պետական հանրակրթական դպրոցներում բռնության դրսևորման դեպքերի արձանագրման և հաղորդման հստակ ընթացակարգեր, (ինչպես ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում, այնպես էլ մարզպետարաններում):*

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը

- *Բոլոր դպրոցներում ապահովել հոգեբանների հաստիքներ,*
- *Հոգեբանների համար տարեկան առնվազն երկու անգամ անցկացնել բռնությունների դեմ կանխարգելմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ:*
- *Սոցիալ-հոգեբանական ուսուցման ծրագրեր (ՍՀՈՒ) ընդգրկել պարտադիր ուսումնական ծրագրերում: Աշակերտները ինչպես մաթեմատիկայի և լեզուների դեպքում պարտավոր են որոշակի մակարդակի տիրապետել կենսակարևոր այս հմտություններին:*
- *Սահմանել սոցիալ-հոգեբանական ուսումնական հմտությունների հատուկ ուսումնական չափորոշիչներ՝ սկսած նախադպրոցական ուսումնական հաստատությունից մինչև ավագ դպրոցի վերջին տարին: Վաղ տարրական դասարաններում աշակերտները պիտի սովորեն ճանաչել և ճշգրտությամբ անվանել իրենց հույզերն ու դրանց համապատասխան վարքը: Ուշ տարրական դասարանում ապրումակցման դասերը պետք է երեխաներին սովորեցնեն ոչ վերբալ նշանների միջոցով հասկանալ այլ մարդկանց զգացմունքները, ավագ դպրոցի վաղ շրջանում նրանք պիտի կարողանան վերլուծել, թե որ գործոններն են իրենց սթրեսային դարձնում և որոնք մոտիվացնում լավագույն արդյունք ցույց տալ: Իսկ ավագ դպրոցում ՍՀՈՒ հմտությունները ներառում են լսելու և արտահայտվելու տեխնիկաներ, որոնք թույլ են տալիս լուծել և ոչ թե սրել կոնֆլիկտները, ինչպես նաև բանակցել երկկողմանի շահավետ լուծումներ փնտրելու ուղղությամբ:*
- *Մշակել հոգեբանական ուղեցույց ձեռնարկ, որը ներառելով հուզական ինտելեկտի մակարդակի բարձրացմանն ուղղված հոգեբանական խաղ-վարժություններ և թրեյնինգային ծրագրեր, կնպաստի բռնությունների կանխարգելմանը:*

ՀՀ մարզպետարաններին

- *Ունենալ թեժ գծի հեռախոսահամարներ՝ բռնության դեպքերի վերաբերյալ ահազանգերն արձանագրելու և արձագանքելու նպատակով:*
- *Բռնության դեպքերի վերաբերյալ հաղորդման հստակ պարտականություն սահմանել ուսուցիչների և դպրոցների աշխատակազմի համար:*

Քաղաքացիական հասարակությանը

- *Ուսուցչական անձնակազմի, ծնողների, աշակերտների՝ բռնությունների կանխարգելման վերաբերյալ կարծիքների հիման վրա մշակել և կազմել ուղեցույց, այն տրամադրել դպրոցներին:*
- *Ուսուցիչների շրջանում իրականացնել վերապատրաստման դասընթացներ երեխաների իրավունքների վերաբերյալ:*
- *Իրականացնել մասնագիտական այրման կանխարգելմանն ուղղված ծրագրեր, որոնք հնարավորություն կտան լիցքաթափվել և ձեռք բերել սթրեսակայունություն:*

ՎԵՐՋԱԲԱՆ

Այս հետազոտությունն իրականացվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության, Սիդայի աջակցությամբ իրականացվող «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում: Նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն ստեղծողը: Հետազոտությունում արտահայտված տեսակետները/բովանդակությունը կարող է չհամընկել ԵՀՀ-ի և/կամ Սիդայի տեսակետների հետ:

ՀԿ նախագահ, ծրագրի ղեկավար՝ Քրիստինա Բաղդասարյան

Հեռ. +374 94 640 297; +374 94 81 31 77

Էլ հասցե՝ info.intrango@gmail.com

Ինդեքս՝ 3114

Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Իսահակյան 48, բն. 50

Հետազոտող՝ Անի Մկրտչյան

Էլեկտրոնային հասցե animkrt@yandex.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.[1]https://clck.ru/dXvF5 Բռնություն: Սկսենք կանխարգելելուց, ՅՈՒՆԻՍԵՖ, Հայաստան, 2018

2.[2] https://clck.ru/ag9XG Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման հավելված

3.[3] https://clck.ru/dXvG2 Աշխարհում դեռահասների կեսը դպրոցում կամ դպրոցի տարածքում ենթարկվում է բռնության իրենց հասակակիցների կողմից. ՅՈՒՆԻՍԵՖ, 2018

4.[4] https://clck.ru/dXvG2 Աշխարհում դեռահասների կեսը դպրոցում կամ դպրոցի տարածքում ենթարկվում է բռնության իրենց հասակակիցների կողմից. ՅՈՒՆԻՍԵՖ, 2018

5.[5] https://clck.ru/ag9VC Գործակալությունները նախազգուշացնում են՝ պետությունները ձախողում են երեխաների հանդեպ բռնության կանխարգելումը, ՅՈՒՆԻՍԵՖ, 2020

6.[6] https://clck.ru/ag9VC Գործակալությունները նախազգուշացնում են՝ պետությունները ձախողում են երեխաների հանդեպ բռնության կանխարգելումը, ՅՈՒՆԻՍԵՖ, 2020

7.[7] https://clck.ru/ag9ow «Երեխաների կարծիքով…» « Սեյվ դը չիլդ րեն», Վորլդ Վիժն, 2017

8.[8] https://clck.ru/ag9W6 Երեխաների մարմնական պատիժը Հայաստանում, 2018

9.[9] https://clck.ru/ag9Wa ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում, 2017

10.[10] https://clck.ru/ag9XG Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման հավելված

11.[11] https://clck.ru/ag9XG Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման հավելված

12.[12] https://clck.ru/ag9XG Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման հավելված

13.[13] https://clck.ru/ag9Wa ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում, 2017

14.[14] https://clck.ru/ag9ZY ՄԱԿ-ի կոնվենցիան երեխաների իրավունքների մասին, 1989

15.[15] https://clck.ru/ag9ZY ՄԱԿ-ի կոնվենցիան երեխաների իրավունքների մասին, 1989

16.[16] https://clck.ru/ag9ZY ՄԱԿ-ի կոնվենցիան երեխաների իրավունքների մասին, 1989

17.[17] https://clck.ru/X2VwY «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 1996

18.[18] https://clck.ru/ag9cu «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, 2017

19.[19] https://clck.ru/ag9cu «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, 2017

20.[20] https://clck.ru/ag9dM «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 2009

21.[21] https://clck.ru/ag9dV «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, 1985

22.[22] https://clck.ru/Z3hTn ՀՀ քրեական օրենսգիրք, 2003

23.[23] https://clck.ru/ag9nq Դպրոցներում բռնության դեպքերի վիճակագրությունը. ներկայացնում են ՄԻՊ-ն ու Ոստիկանությունը, asparez.am, 28.12.2021

ՀԱՐՑԱԹԵՐԻԹԻԿՆԵՐԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«ԻՆԹՐԱ» հոգեբանական ակումբ» հասարակական կազմակերպությունը «Կանխարգելենք բռնությունը դպրոցներում՝ ի նպաստ առողջ հասարակության» ծրագրի շրջանակում Շիրակի մարզի 20 դպրոցի տնօրենի եւ 20 դասղեկի հետ անցկացնում է խորքային հարցազրույց:

Հարգելի ուսուցիչ, խնդրում ենք մի քանի րոպե տրամադրել որոշ հարցերի պատասխանելու համար:

1.Ձեր դպրոցում եղե՞լ է երբեւէ բռնության դեպք: Խնդրում եմ մի քանի նախադասությամբ պատմել այդ մասին:

2.Ի՞նչ եք անում, երբ դպրոցում ականատես եք լինում բռնության դեպքի:

3.Ի՞նչ եք կարծում՝որո՞նք են բռնության պատճառները:

4.Դպրոցում, ձեր աշխատանքային տարիների ընթացքում, բռնության ենթարկված անձի հետ երբեւէ զրուցե՞լ եք, ի՞նչ է պատմել նա, ի՞նչ է անհրաժեշտ նրան առաջնային:

5.Ի՞նչ եք կարծում՝ ինչպե՞ս կարելի է դպրոցում կանխարգելել բռնության ցանկացած դրսեւորում:

Շնորհակալություն

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«ԻՆԹՐԱ» հոգեբանական ակումբ» հասարակական կազմակերպությունը «Կանխարգելենք բռնությունը դպրոցներում՝ ի նպաստ առողջ հասարակության» ծրագրի շրջանակում Շիրակի մարզի աշակերտների շրջանում անանուն հարցում է իրականացնում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. *հարցաթերթիկն անանուն է՝ ձեր, ձեր ընկերների անկաշկանդ և ակտիվ մասնակցությունն ապահովելու նպատակով: Ձեր կողմից ներկայացված անկեղծ պատասխաններն ու դեպքերը կօգնեն բացահայտել և կանխարգելել դպրոցներում բուլինգի դեպքերը:*

Սույն հարցաթերթիկի նպատակն է վեր հանել Շիրակի մարզի դպրոցներում բռնության/բուլինգի պատճառներն ու հետևանքները, առաջարկել դրա բացառման անհրաժեշտ մեխանիզմները:

Հարգելի աշակերտ, խնդրում ենք մի քանի րոպե տրամադրել այս անանուն հարցաթերթիկը լրացնելու նպատակով:

(Նախընտրելի տարբերակն առնել շրջանակի մեջ: Հարցաթերթիկի 13-րդ, 14-րդ եւ 16-րդ հարցերին պատասխանել հնարավորինս հակիրճ):

1.Ձեր տարիքը:

2.Ձեր սեռը:

. Արական

. Իգական

3.Ձեր բնակության վայրը: (Գյուղակա՞ն, թե՞ քաղաքային համայնք)

4.Ի՞նչ է բռնությունը Ձեզ համար:

ա.իրավունքի եւ ազատության սահմանափակում

բ.խախտում

գ.անձի արժանապատվության ոտնահարում (վիրավորանք, ծաղրանք)

դ.վարքագիծ, որը կարող է վնասել անձի ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը

ե.նշված բոլոր տարբերակներն էլ բռնություն են ինձ համար

5.Բռնության դրսեւորման ինչպիսի՞ դեպքերի եք հանդիպել դպրոցում:

ա.սեռական

բ.ֆիզիկական

գ.հոգեբանական

դ.նշված բոլոր դեպքերի ականատեսը եղել եմ

ե.նշված բոլոր դեպքերի ականատեսը չեմ եղել

6.Հիշո՞ւմ եք, թե երբ եք ականատես եղել բռնության դեպքի:

ա.այո

բ. ոչ

7.Ավելի հաճախ որտե՞ղ եք ականատես լինում բռնության դեպքերի:

ա.դպրոցում

բ.փողոցում

գ.տանը

8.Ըստ ձեզ՝ հիմնականում դպրոցի ո՞ր հատվածում է դրսևորվում բռնությունը:

ա. Դասասենյակում

բ. Դպրոցի անկյուններում

գ. Դպրոցի զուգարաններում

դ. Դպրոցի հանդերձարաններում

ե. Դպրոցի տարածքից դուրս

զ. Այլ:

9. Դուք երբեւէ եղե՞լ եք բռնության զոհ դպրոցում:

ա.այո

բ.ոչ

10.Երբ դպրոցում ականատես եք լինում բռնության դեպքի, ի՞նչ եք անում:

ա. դպրոցում բռնության դեպքի ականատես չեմ եղել

բ.պատմում եմ հարազատներիս, բայց ոչ մի քայլ չեմ ձեռնարկում

գ.պատմում եմ հարազատներիս, որից հետո քայլեր ենք ձեռնարկում

դ.օգնում եմ բռնության ենթարկվածին

ե.զանգում եմ թեժ գիծ

զ.տեղյակ եմ պահում դպրոցի տնօրենին

է.տեղյակ եմ պահում դպրոցի դասղեկին

11.Արդյո՞ք Ձեր դպրոցում երբևէ հանդիպել եք հոգեբանի կամ անչափահասների գործերով տեսուչի/ոստիկանի, ովքեր հետաքրքրվել, զրուցել են Ձեր կամ մյուս աշակերտների հետ դպրոցում բռնության դեպքերի և բուլինգի մասին:

ա.Այո, հանդիպել ենք հոգեբանի

բ.Այո, հանդիպել ենք անչափահասների գործերով տեսուչի/ոստիկանի

գ.Ոչ, որևէ մեկին չենք հանդիպել դպրոցում

12.Երբևէ Ձեր դպրոցում անցկացվե՞լ են դասընթացներ, դասղեկական ժամեր, իրազեկման հանդիպումներ կամ այլ միջոցառումներ բուլինգի մասին

ա. Այո

բ. Ոչ

13.Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են մարդիկ բռնություն գործադրում:

14.Դպրոցի ուսուցչի կամ աշակերտի մասնակցությամբ մեկ դեպք հիշեք եւ մի քանի բառով նկարագրեք, որը բռնություն է եղել Ձեզ համար:

---

15. Արդյո՞ք դպրոցը համարում եք ապահով և անվտանգ միջավայր:

ա.Այո

բ. Ոչ

Եթե ոչ, ապա ինչու՞, ի՞նչ ռիսկեր եք տեսնում:

---

16. Հնարավո՞ր է ամեն խնդիր հարթել դպրոցում՝ առանց բռնության որեւէ դրսեւորման:

ա.Այո

Բ.Ոչ

17. Ի՞նչ եք կարծում, ինչպես կարելի է դպրոցում կանխարգելել բռնության ցանկացած դրսեւորում:

Շնորհակալություն

ՀԱՎԵԼՎԱԾ 3

«ԻՆԹՐԱ» հոգեբանական ակումբ» հասարակական կազմակերպությունը «Կանխարգելենք բռնությունը դպրոցներում՝ ի նպաստ առողջ հասարակության» ծրագրի շրջանակում Շիրակի մարզի ծնողների շրջանում անանուն հարցում է իրականացնում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. հարցաթերթիկն անանուն է՝ ձեր, ձեր ընկերների անկաշկանդ և ակտիվ մասնակցությունն ապահովելու նպատակով: Ձեր կողմից ներկայացված անկեղծ պատասխաններն ու դեպքերը կօգնեն բացահայտել և կանխարգելել դպրոցներում բուլինգի դեպքերը:

Սույն հարցաթերթիկի նպատակն է վեր հանել Շիրակի մարզի դպրոցներում բռնության/ բուլինգի պատճառներն ու հետևանքները, առաջարկել դրա բացառման անհրաժեշտ մեխանիզմները:

Հարգելի ծնող, խնդրում ենք մի քանի բոպե տրամադրել այս անանուն հարցաթերթիկը լրացնելու նպատակով:

1. Ձեր տարիքը

---

2. Ձեր սեռը

.Արական

.Իգական

3. Ձեր բնակության վայրը (Գյուղակա՞ն, թե՞ քաղաքային համայնք)

---

4. Բռնության դրսեւորման ինչպիսի՞ դեպքերի մասին է պատմել Ձեզ ձեր երեխան:

ա. սեռական

բ. ֆիզիկական

գ. հոգեբանական

դ. նշված բոլոր դեպքերի մասին պատմել է

ե. նշված բոլոր դեպքերի մասին չի պատմել

5. Ձեր երեխան երբեւէ եղե՞լ է բռնության զոհ դպրոցում:

ա. այո

բ. ոչ

6. Ի՞նչ է բռնությունը Ձեզ համար:

7.Եթե Ձեր երեխան լինի բռնության զոհ, ի՞նչ կանեիք, ի՞նչ քայլերի կդիմեիք:

8.Երբեւէ բռնության մասին խոսե՞լ եք դպրոցի տնօրենի կամ դասարանի դասղեկի հետ:

ա. Այո

բ. Ոչ

Շնորհակալություն

www.intrango.am

+37494640297

info.intrango@gmail.com

Ք. Գյումրի, Իսահակյան 48